

451

ԿՈՂՄԵՐԱՏՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Br

Հ. ԴՎՈԼՈՅՑՑԻՑ

ԱԹՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

38

Դ-84

ս. 6

1028

Հայաստանի Հանրապետության Գործադրության նույնագիր

Հ 1 ԿՈՂԹԵՐԱՏՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 1

38

Դ-84

Շ. ԳՎՈԼԱՅՑԿԻՑ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

(Փարզմանուր. ռուսենից)

ՅԵՐԵՎԱՆ

1928

ՀՐԱՄԱՆ ԿԱՌԱՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՈԲՀԱՐԴԱՐ

ՀՀՀ

4.04.2013

59.83/
19859

06 APR 2010

I. ԱՊՐԱՆՔԴՅԻՆ ՍՈՎԻ ԶԱՓԵՐԸ

Ապրանքային սով մ.զ մոտ ընդունված ե
անվանել արդյունաբերական ապրանքների պա-
կասը շուկայում։ Այդորինակ դրությունը հետե-
գանք ե այն բանի, զոր ազգաբնակության կող-
մից առաջադրված արդյունաբերական ապրանք-
ների գնողական պահանջին համապատասխա-
նում ե արդյունաբերություն գործվածքների ան-
բ սփարար առաջարկ։

Ապրանք սին սովի չափերի մասին գաղա-
փար կազմելու հստար, անհրաժեշտ ե ամենից
ուսուջ իմանալ ազգաբնակության դրամական յե-
կա մտի տարեկան ընդհանուր գւմարը։ Գլխաւ-
գորագես բանվորներից և ծառապողներից բազկա-
յած քաղաքային ազգաբնակության համար դրժ-
վար չե համապատասխան հաշիվն անել՝ անհրա-
ժեշտ ե միայն աշխատավարձի տարեկան գու-
մարին ավելացնել այն յեկամուտները, զոր ստա-
նում են արհեստավորները, անտշխատ տարրե-
րը և այն Ավելի լարջ մնում է զործը զյուղի
գրամական լիեւամուտը հաշվիլուց Ազոտիդ ոլեար
ե հաշվառել քաղաքի համար զնացող զյուղա-
անառանական արդյունաբերի վաճառքից զյուղագ

Գրառեպար 696 ր.

Տիրաժ 2000

Պետհատի 2-րդ տպարան Յերեվանում—556



3690-91 / 3610-53

մուտքերը, անախազործական արհեստներից և
դրսից ստացվող յեկամուտները, բեռնակրու-
թյունից ստացվող վաստակները և այն: Բայց
ամբողջ յեկամուտը չե գործադրվում ապրանք-
ների գննան համար: Գնողական ֆոնդը, այդ
բառի բուն առումով, փորոշելու համար անհրա-
ժեշտ և ազգ բնակության յեկամուտների ընդ-
հանուր գումարից հանել այն մասը, վոր գուրս
և հանգում պետության կողմից, իր և ուղղակի
հարկեր (յեկամուտին հարկը քաղաքում և գյու-
ղում՝ սական՝ գյուղում): Բացի այդ մենք
զիանքը, վոր ազգաբնակության գնողական ֆոն-
դի մի մասը ծախսվում է գյուղատնտեսական
մթերքների գննան համար: Արդյունաբերական
ապրանքների վրա ծախսվող գումարը վորոշ-
ելուց հարկ և լինում ոգովել բանվորների և
գյուղացիների բյուջեների հետազոտման ար-
դյունքներից: Այդ բյուջեներից մենք իմանում
ենք, թե ինչ ապրանքների վրա յե ծախսում իր
դրամական յեկամուտները բանվորը և գյուղա-
ցին:

Աղդաբնակությանն առաջարկող արդյու-
նաբերական ապրանքների ֆոնդը վորոշելուց
մենք, ինարկե, կարող ենք հաշվառել միայն
այս արդյունաբերական գործվածքները, վորոնք
լայն շուկան յեն մահաւմ և իրոք դնվում են այ-

դաբնակության կողմից: Այդ ֆոնդի մեջ մահաւմ
են, ամենից առաջ, — բամբակե և բրդե հյուս-
վածքները, կաշին, կոշկեղենը, կրկնակոշիկը,
շաքարը, աղը, ծխախոտը, կերոսինը, լուցկին,
անալին գործածության առարկաները և այլն:
Դրան միանում են զլխափորակես գյուղի հա-
մար՝ շինարարական նյութերը, գյուղատնտե-
սական մեքենաները և յերկաթը: Այս պատճա-
ռով առաջարկության ֆոնդը չըպետք է շփոթել
արդյունաբերության ամբողջ արտադրանքի հետ
— նրա մեջ չեն մահաւմ վոչ տուրբինները (ջրա-
նիվ), վոչ շոգեզնացները, վոչ ել քարածուխի և
նավթի այն գանգվածը, վոր արդյունաբործվում
և Միության մեջ:

Սրանք են այն ձեերը, վորոնցով հաշվվում
են, մի կողմից, արդյունաբերական ապրանքնե-
րի գիմաց ազգաբնակության ծախսած գնողա-
կան ֆոնդը, և, մյուս կողմից, լայն շուկա
նետվող արդյունաբերական ապրանքների ֆոն-
դը: Մենք անհրաժեշտ համարեցինք կանգ առ-
նել հաշվառման այս ձեի վառ նրա համար,
վորպեսզի հենց ոկզբից ընթերցողի ուշագրու-
թյունը գարձնենք նրանց բավականաշափ կո-
պիտ բնույթի վրա: Խոսքը վոչ թե ճշգրիտ թվե-
րի մասին ել լինելու, այլ լոկ մոտավոր կերպով
ընդունված գումարների մասին: Միայն այս

նախընթաց բացատրությամբ ե, վոր մենք
հնարագոր ենք համարում տվյալներ բերել ապ-
րանքային պակասի (սովի) մասին:

Խորհրդային Միության Առեարի Ժողկումա-
տի Տնտեսական Վարչության մոռավոր հաշվով,
մեն ունենք հետեւյալ թվերը (միլիոն ռուբլի-
ներով):

1925/26 1926/27 1927/28

թվ. թվ. թվ.

Ազգաբնակության	1925/26	1926/27	1927/28
գնողական ֆոնդն ար-			
դրունաբերական ապ-			
րանքների համար —	7.039	7.592	8.030
Լայն սպառման			
արդյունաբերական			
ապրանքների առա-			
ջարկության ֆոնդը	6.726	7.495	7.865

Այս թվերից յերեւմ ե, վոր արդյունաբե-
րական ապրանքների պահանջը չի ծածկվում
առաջարկով՝ 1925—26 թ. 315 միլ. ռուբլով
(կուր թվերով), 1926—27 թ. 100 միլ. ռ. և
ընթացիկ 1927—28 թ. 165 միլ. ռ.*). Դժվար
չե տեսնել, վոր ընդհանուր (ИТОГОВЫЕ) գու-
մարները զգալի կերպով նվազեցնում են ապ-
րանքային սովի չափերը: Իրոք, մենք համեմա-

*.) 1927—28 թ. համար տվյալները մշակված են
նախական անտեսական պլանների հիման վրա:

տում ենք ազգաբնակության գնողական ֆոնդն
արդյունաբերական ապրանքների ամբողջ զանգ-
գածի հետ, վորը կարող ե առաջարկվել շուկա-
յին: Նրա մեջն են մտնում ինչպես առատ և
նույնիսկ ավելցուկ տվող ապրանքները, նույն-
պես և սակավաքանակ (գեղիցիտացին) ապրանք:
Այս կերպ, մենք լենթագրում ենք, թե բամբակե-
կամ բրդե զործվածքների գեղիցիալ (պակասը)
ծածկվում ե աղով, մասնորկայով, լուցկով, կե-
րոսինով և այլն: Այսորինակ յենթագրությունն,
անկասկած, կամայական ե: Յեթե նույնիսկ ան-
հրաժեշտ քանակությամբ չիթեղեն գնելու ան-
հնարինության հետևանքով գորոշ չափով ավե-
լանում են ալ, առատ ապրանքների գնումները,
ապա ալզպիսի փոխարինումը կարող ե միայն
շատ սահմանափակ բնույթ ունենալ բանվորի և
գլուղացու ծախսի բյուջեցում: Մի կողմից ան-
ցալ տարիների փորձերից խճանալով ազգաբնա-
կության ծախքերի կազմությունը (այսինքն այն
գումարները, վորոնք ծախսվում են առանձին
ապրանքների վրա), և արդյունաբերության ար-
տադրական ծրագրիները, մյուս կողմից, մենք
կարող ենք մոտավորապես գորոշել սակավաքա-
նակ ապրանքների գեղիցիտափ մ. տափոր չափերը:
1927—28 տարվա համար համապատասխան հաշ-
վարկումներից մենք ստանում ենք հետեւյալ թվերը՝

	Միլի.	մետր	միլի.	որ.
Պակաս են տալիս՝				
Բամբակե հյուս-				
վածքները	220	արժող.	140	մանր, զներով
Բրդե գործվածք-				
ները	16	»	80	»
Կաշվե վառա-				
մանները (դուր)	5	»	65	»
Պակասը կը կազմի՝ բամբակե հյուսվածքների յինթաղրվելիք պահանջի մոտ $10^{\circ}/_0$, մահուցե- ղենների մոտ $20^{\circ}/_0$ և կաշվե-վառամանների մոտ $10^{\circ}/_0$ -ը:				

Այս յերեք գլխավոր սակավաբանակ ապ-
րանքները տալիս են ընդհանուր գեֆիցիտ 285
միլի: Յեթե գրան ավելացնենք թերի, մետաղնե-
րի և հասարակի, այսպես կոչված կիսասպիտակ (полубелое) ապակու պակասը, ապա ապրան-
քա ին սովոր ընդհանուր չափերը կը հասնեն
մինչև 350—400 միլ. սուրբու: Նույն կերպ կա-
րելի յեր հաշվել և նախընթաց յերկու տարինե-
րի վերաբերյալ:

Իսկ յեթե վերը բերված մերը, պահանջի
և առաջարկի անհամաշտության մասին, լրիվ
պատկեր ել չեն տալիս ապրանքային սովի ծա-
վալի մասին, ապա նրանք, այնուամենանիվ,
բնորոշում են շուկայի լարվածության աստի-
ճանը:

Նրանք ցույց են տալիս վոր 1925—28 տ.,
վերցված ամբողջությամբ, ավելի ծանր և լեղել,
քան 2926—27 տ., յերբ գեֆիցիտի գումարը
315 միլիոնից իջել և 100 միլիոնի, և վոր
1927—28 տ., վոր 165 միլի. գեֆիցիտ և տա-
լիս, անհամեմատ ավելի պակաս «սովլալ» և լի-
նելու, քան 1925 26 տ., բայց ավելի լարված
և լինելու, քան անցյալ 1926 27 տ.:

2. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճիշտ և, 1926—27 տ. տալիս և մեղմա-
ցումն ապրանքային սովին, բայց միայն այն
չափ, վորչափ մենք վերցնում ենք ընդհանուր
հասեանքները սկսած 1926 թ. հոկտեմբեր 1-ից
մինչև 1927 թ. հոկտեմբեր 1 ր: Յեթե մենք
այն բաժանենք կիսամակների, այդ գեպում
պատկերը կը փոխվի՝ տուածին կիսամակի հա-
մեմատական բարենպաստ թան հանդիպ,
յերկրորդ կիսամակում մենք կըստանանք ապ-
րանքային սովի կտրական սրացում, վորն ան-
ցնում և նոր անհասական տարրուն: Վարդեն և այս
յերկութիւ պատճառը:

Բացի սեղոնային ընույթ կրող շատ երական
պատճառներից, վորոնց մասին մենք կանգ կառ-

նենք ներքե, այստեղ պետք է նշել յերկու փաստ՝ նախ, մանրածախ գների իջեցումը և յերկրորդ՝ պատերազմի վտանգը:

1927թ. փետրվարին, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումը դիրեկտիվ տվեց՝ իջեցնել արդյունաբերական ապրանքների մանրածախ գները՝ առ 1-ն հունիս միջին հաշվով 10% ՝ հանդեպ առ 1 ն հունվար յեղած զըների, և այս դիրեկտիվը խորհրդային և կուսակցական հասարակացնության, արդյունաբերական և առևտրական կազմակերպությունների և կարգավորող որդանների միահամուռ ուժերով կենսագործվել և լիակատար կերպով։ Դրա հետեանքով սպասողը շահեց մոտ 350 միլիոն ռուբլի, վորից 300 միլիոն ընկնում և հենց 1926—27 տարվա յերկրորդ կիսամյակի վոր (տպարի — սեպտեմբեր):

Այս նշանակում ե, թե ազգաբնակությունը հնարավ բություն և սաացել լրացուցիչ պահանջ ներկայացնել շուկային 300 միլիոն ռուբլու, կամ մոտավորապես 8% ավել, քան նա կարող եր գնել նախկին, չիջեցված գների ժամանակ։ Շատ բնական ե, վոր այդ հանգամանքը պետք է սրություն մտցներ արդյունաբերական ապրանքների շուկաի մեջ։

Բայց հարց ե ծագում՝ արժեքը, արդյոք,


իջեցնել արդյունաբերական գները յեթե հենց սկզբից հայտնի յեր, վոր դա կառաջացնի պահանջի մեծացում։ Բանի վոր գների իջեցման հիմնական պատճառները մանրամասնորեն լուսաբանված են յեղել ինչպես մամուլում*), նույպես և բանվորական լայն ժողովներում, մենք մանրամասն կանգ չենք առնի նրանց վրա։

Նշենք միայն վոր հենց նոր գրված այս հարցն որինական կը լիներ, յեթե լրացուցիչ պահանջի հետևանքը լիներ վերադարձ դեպի մանրածախ գների նախկին մակերեսութը։ Այս դեպքում արդյունաբերության կատարած գների իջեցումը լրացուցիչ յեկամուտ կը տար առետրական սպազմատին, վորը կը կորցներ ամեն մի գրգում կրծատելու համար իր ծախսերը, իսկ սպասողին վոչինչ չեր համնի։ Բայց իրականում նման վոչինչ տեղի չի ունեցել։

Մանրածախ գների մակերեսութի մասին պատկերացումն ե տալիս հետեւալ դիագրաման (աես յերես 12-ուժ)։

Այսպիսով՝ մանրածախ գների մակերեսութը ավարանքալին սովոր ժամանակ վոչ միայն չի բարձրացել, այլ և հետագա իջեցումն ե հայտ-

*) Տես, որինակ, ընկ. Միքոբանի գրքույկը «Գների իջեցման կամպանիալի արդյունքները» Մոսկվա, 1927թ.



նաբերել: Այդ և շուկայում յեղած ներկագրության հիմնական տարրերությունն այն բանից, վոր նկատվում էր նախորդ տարիներում: Ապրանքային սովոր ամեն մի սրության ժամանակ, յերբ աճում էր պահանջը, մասնավոր առևտուր և նույնիսկ կոռպերացիան բարձրացնում էին զները: Այդ առևտկեալից բնորոշե, որինակ, 1925 թ. ապրանքային սովոր ժամանակ յեղած զների շարժումը: Արդյունաբերական տպրանքների ժամանակախ զները (միջինը՝ պետական առևտորի, կոռպերացիայի և մասնավոր առևտորի համար) աճելով աճսից ամիս, հոկտեմբեր 1-ից մինչև մայիս 1-ը բարձրացել են 6 տոկոսով: Նման յերեսության համարյա թե տեղի չունի: Առաջինը՝ մասնավոր առևտուրն ընդհանրապես կորցրել է իր յերբեմնի նշանակությունը յերկրի ապրանքաշրջանառության մեջ՝ նրա բաժինը մանրածախի մեջ ընկել է 1924—25 թվի $42,7\%$ ից մինչև $:26$ տոկոս 1926—27 թ., միաժամանակ ավելի մեծ անկում ո նենալով մեծաքանակ առևտորի մեջ՝ $9,4$ տոկ.-ից մինչև $5,1$ տոկ. նույն առիներում: Ինչ վերաբերում է սովորաբանակ ապրանքների վաճառքում մասնավորների ունեցած դերին, ապա նա հասցված ե նվազագույն չափերի, քանի վոր մեր արդյունաբերության ար-

ասկրած մահու փակտութան, կաշին, ապակին և
նման սովորն քները համարյա ամբողջովին ան-
ցնում են պիտական և կոռուպերատիվ խանութ-
ներով։ Յերկրորդը՝ կոռուպերատիվ տակառքը,
վոր դեռ ժեկ-յերկու տարի առաջ հեշտությամբ
յենթարկվում եր շուկայի տարերքին, ավելի յե-
կազմակերպված ե անց ե կացնում պետության
կարգավորող ձեռնարկութերը։ Բայց յեթե արդ
այդպես ե, յեթե առևտուրը գների բարձրացու-
մով չը պատասխանեց պահանջի ռւժեղացմանը,
ապա բանվորն ու գյուղացին գնեցին նույն
ապրանքավին մասսան ավելի եժան։ Ճիշտ ե,
նրանց լրացուցիչ պահանջը չը բավարարվեց լիո-
վին, և նրանց ձեռքին մնաց զրամական վորոշ
գումար, վորը և շարունակում եր ճնշել շու-
կան, բարձրացնելով պահանջը։

Մյուս պատճառը, վոր նպաստել ե ապ-
րանքավին սովի ռւժեղացմանը—դա պատերա-
զմի վանակն ե։ Խզումն Անդիայի հետ, ընկ.
Վոլկովի սպանությունը Վարչավայրում, մեր հա-
րաբերությունների բարզացումը Թրանսիայի
հետ և բուրդուական աշխարհի կողմից ԽՍՀՄ ի
վեհ նոր ինսերվինցիայի բացարձակորեն պատ-
րաստությաններ տեսնելը—այս բոլորը ստեղ-
ծում եր պատերազմի ելական վատանդ, Ինչպես
քաղաքային, նուժ պես և, մահավանդ, զրւու-

կան ազգաբնակությունը, վորը հիշում ե իմ-
պերիալիստական և քաղաքայիական պատե-
րազմների շրջանի զրկանքները, սկսեց պաշտր-
ներ՝ կուտակել։ Յեղել են ամիսներ, յերբ
զնում ելին բառացի կերպով ամեն ինչ Նույն-
իսկ այնպիսի, կարելի յէ ասել, զերպամացսպես
տուառ առլրանքի, ինչպիսին աղն ե, վորի լն-
թացիկ սպասումն առավելապես կայուն ե, մա-
տակարարման մեջ առաջացել ելին նկատելի
ընդհատումներ։ Գյուղացիներն աղ ելին զնում
ամբողջ պարկերով, և նորմալ ոլաշարների վեր-
ջանալը կոռուպերատիվներում, միայն նպաստում
եր պահանջի նոր ռւժեղու ցմանը։ Բավական ե,
վոր ճենց այս բոլորիս առլրանք չկա, ուրեմն
զատում ե սպասողը, — ընդհանրապոս չկա զրտ
նից և չի յել լինելու հետապայօւմ։ խակ այս-
տեղից յեղբակացություն ե հանում նա՝ զնիր,
վորքան կարող ես։

Բայց գնել կարելի յէ միայն այն ժամա-
նակ, յերբ զրած կա Հարց և ծաղում, ազգա-
բնակությունն ուներ սիջցներ։ Ճշգրիտ հաշ-
վել թե քանի ուուբի կա ազգաբնակության
գրավաններում, — ի հար ե, անիբրւորձլի խնն-
դիր և ազգպիսի հաշիվներ կաբող են լինել
միայն վերին աստիճանի կոպիտ։ Մեր Կե արո-
նական վիճակագրական վարչությունն ահա որ-

զեն մի քանի տարիների ընթացքում հետագու տություն և կատարում զանազան շրջանների և զանազան՝ կարողության տեր տասն հազար դյուզացիական անտեսությունների բյուջեների (մուտքի և յելքի): 1926 թ. հետագուառությունը ցուց է տվել վոր առ 1-ն ապրիլ յուրաքանչյուր մի անտեսության դրամական մնացորդ և ընկնում, միջին հաշվով, մոտ 20 ռուբլի: Յեթե մենք յենթագրենք, վոր 1927 թվի դարձնան այդ գումարը չի պակասել ապա մենք կդանք այն յեզրակացության, վոր բոլոր դյուզացիական անտեսություններում ձեռքի վրա յեղել և մոտ 400 միլ. ռուբլի դրամ: Ճիշտ ե, անհնարին և ամբողջ կանխիկ դրամը, մինչև վերջին կողեկը, ծախսել բաց յեթե յենթագրենք, վոր դյուզացիությունը ծախսել է կարճ ժամանակի ընթացքում միայն այդ գումարի կեսը, ապա մենք կհասկանանք թե այդ լրացուցիչ պահանջն ինչպես պետք է անզրադառնար շուկայի վրա: Զե՞ վոր 200 միլ. ռուբլին, վոր շուկա յե նետվում, ասենք, յերկու ամսվա ընթացքում, ավելի քանի 30 տոկոսով բարձրացնում է արդյունաբերական ապրանքների այն պահանջը, վոր դյուզացիական ազգարնակությունը սովորաբար ներկայացնում է այդ ժամանակի համար:

Անցած 7-8 տօմիսների ընթացքում յեղած ապրանքային սովի սրությունը բացարելուց չի կարելի մոռացության տալ և այն հանգա մանքը, վոր պիտույքունը պատրաստվում եր պատվանության համար: Այս նշանակում ե, թե մենք պետք ե գուրս հանելինք, անտեսությունից նշանավոր չափով նյութական արժեքներ, վորոնք այլ պայմաններում՝ կզնային արտադրության մեջ շուկայական պահանջի բավարարման համար:

Վերեվում մենք նշեցինք, վոր յեթե հետեւ վելու լինենք անտեսական պլաններին, վորոնք ընդունված են սառուղիչ թվերում, այդ գեղքում 1927. 28 ա. ընդհանուր առմամբ կտա վորոշ չափով բարձր ապրանքային սով, քան 1926-27 ա.: Այդ բացարարիւմ ե նըանով, վոր 1927 28 ա. առաջարկի ֆոնդն աճում է մի քիչ գանգաղ, քան զնողական ֆոնդը: Վորպեսզի կարելի լինի գտնել արդյունաբերական ապրանքների առաջարկի աճման տեսազի մասին, մենք բերում ենք Գոսպանի ստուգիչ թվերից հետեւյալ գործակը (այս յերես 18 ում):



	1927/28 թ. պ/պ/ո-ով 1926/27 թ. նկատմ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Առաջանքին պահպանի առաջարկի ա- ճուղի առաջարկի առաջարկի ա- ճուղի բնակչության շահայտության արտա- սարահայտությամբ կան արտա- մանը նայությամբ գներով
ՍԵԿԱՎԱՔԱՆԱԿԵՐ	
Բամբակյա գործվ.	105,9
Բ բ դ հ և	106,2
Կաշվելին ապր.	103,0 ¹⁾
Մն մետաղներ	119,1 ²⁾
Ապակի կիսասպիտ	113,3
ԱՌԱՋՆԵՐԸ	
Կրկնակաշեկիներ	119,3
Շաքոր	153,0
Ա դ	104,4
Մխախսակին	108,2
Մախսորկա	103,0
Կերոսին	—
Լուցկի	97,6
Հացի գինի (գարեջ, կված և ալյն)	118,2
Մետաքսյա գործվ.	118,6
Գյուղատնտ. միքեն.	118,7 ²⁾
Սղցանյութեր	109,9

- 1) Բնակչության արտահայտությամբ նշանակում է՝ մետրերով գմբերով, հատով և ալյն
2) Գյուղական արդյունաբերության բոց թողարկ գներով
3) Առաջարկի նվազումը պաշարների նշանակած աճման հետահաջող:

Ի՞նչպես յերկում ե թվերի յերկրորդ աղյու-
սակից, 1926/27 տհու. ա. հետ համեմատերով,
համարյա, բոլոր ապրանքները 1927/28 թ.
թվականին արտահայտությամբ տճռւմն են տա-
լիս: Իսկ ինչ վերսբերում ե մարդաբախ գինե-
րով հաւաքած առաջարկին (յերրորդ սլուն.), առ-
պա մի քնչ այլ թվեր են ստացվում: Այսպես;
որինակ, բամբակյա գործվածքների առաջարկը
բնակչության արտահայտությամբ աճում է 2,4 տո-
կոտով, մինչդեռ արժեքալին (դրամական) ար-
տահայտությամբ առաջարկին, ընդհակառակն,
պակասում է՝ 2,8 տոկոսով: Բրդե զործվածքնե-
րի քանակը, վօր ուղղվում ե գետի լայն շու-
կա, ավելանում է 3,5 տոկոս, այն ժամանակ
յերբ նըանց արժեքը մանրածախը մեջ իջնում
է ամբողջ 10 տոկոս: Վորպես կամոն յերրորդ
սլունյակը ցույց է տալիս կամ անհշան աճում,
քանի յերկրորդը, կամ թե նույնիսկ անկում է
տալիս: Դժվար չե զլսի ընկնել, վօր դա ար-
դյունք է կատարված և կատարվելիք գների
իջեցման: Արդյունաբերական ապրանքների տ-
առաջարկի ընդհանուր փոնդն աճում է 5 տոկո-
սից մի քիչ պակաս (ծիշտ և տպանքային մաս-
սայի բավականաչափ մեծ աճման հետ միախին),
վերցված կիրագրամներով, մետրերով և ալյն),
բոց քանի վօր ազգաբնակության գնողական

Փոնդն աճում է ավելի քան 7 տոկոս, 1927 28
թ. մեծացնում է առաջարկի և պահանջի միջի
լեզու ճեղքածքը 1926. 27 տ. տ. համեմատու-
թյամբ: Հենց այս հետեւ ճիմք և առլիս լեն-
թագրելու, վոր ընթացիկ տառեսական տարին,
չիթե չը փոխվեն արտադրական ծրագիրները, ին-
կան իւ ավելի լարված, քան անցյալը:

3. ԱՐՄԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Վերը մենք տեսանք, վոր ստեղծագործականակ
(դեֆիցիտացին) ապրանքների 350 - 400 միլ.
սուրլու պակասի հետ, ընթացիկ տառում ար-
դյունաբերության ապրանքների գնողական փոնդը
չի ծածկվում առաջարկով ավելի քան 150 միլ.
ուուր: Հետեւապես, արդյունաբերական ապրանք-
ների պակասը չի զերազանցում նրանց ընդհա-
նուր պահանջի 50%: Ընդհանուր պահանջը գո-
րոշվում է 8 միլիորդ սուրլի: Ապրանքային
այգափոխ դիֆիցիելը, ավելի կատ պակաս հավա-
սարաչափ կերպով ամբողջ տարվա ընթացքում
բաշխելուց չեր կարող վերջին ամիսներումս
նկատվող սրությունը մացնել մեր անտեսական
կոնյունկտուրայի մեջ: Խնդրի եւությունը, սա-
կան ան ե, վոր տարեկան գնողական փոնդը
մի կողմից, և արդյունաբերական ապրանքների
տարեկան առաջարկը մշուս կողմից, զանազան
կիրակ են բաժանվում բայ կիմառաների:

Յեթև արդյունութերական ապրանքների տա-
րեկան գնուտական փոնդն ընդունենք 100, ապր
կվարտալավին փոնդերի չափերը հետեւող թվերով
կը վարուշին ($\frac{0}{0} / \frac{0}{0} - \text{ներով}$)

	առարկն	ասրդ.
I կ. II կ. III կ. IV կ. ասր.		
Հողագործական ադ. 1925/26թ. 33,8 21,5 19,9 24,8		
Գարնակություն 1926/27թ. 32,1 19,8 21,3 26,8 100		
Առ Հողագործական 1925/26թ. 25,4 23,0 25,7 25,9 100		
Աղդաբնուկութ. 1926/27թ. 26,0 23,2 25,6 25,2 100		
Ամբողջ աղդա 1925/26թ. 29,9 22,2 22,6 25,3 100		
ընակութ. 1926/27թ. 29,2 21,4 23,3 26,1 100		

Պահանջի տեսակետից ամենակենդանի կվարտան, ալսպիսով, հայնդասանում են չորրորդը և տուաջինը (հուլիս գեկտեմբեր), այսինքն զուգամանական հայթաթումների (I և IV) և շինարարական աշխատանքների (IV կվ.) հիմական սեղոնը։ Այս յերկու կվարտանքների վրա յեծանրանում զյուղի տարեկան պահանջի $58\text{--}59^{\circ}/_0$ և ամբողջ ազգաբնակության տարեկան պահանջի $53\text{--}55^{\circ}/_0$ -ը։ Արգումաբերական ապրանքների պահանջի նկատելի բարձր տոկոսն ընկնում է առաջին կվարտալի վրա՝ հողագործական ազգաբնակության համար նաև հավասար և $32\text{--}34^{\circ}/_0$, իսկ ամբողջ ազգաբնակության՝ համարյա $30^{\circ}/_0$ ի։

Իսկ ինչ կարող ենք մենք հակադրել այս, որինակ բարձր պահանջին։ Այս հարցին պատասխանելու համար տեսնենք, թե ինչպես երաշխիում լայն սպառողական տարեկանների արտադրությունը համապատասխան կվարտանքների վրա (տարեկան արտադրանքն ընդունում ենք 100)

1 կվ.	II կվ.	III կվ.	IV կվ.	ամբ. տարի	
1925/26թ.	25,3	26,6	24,2	23,9	100
1926/27թ.	27,0	26,5	24,0	22,5	100

Այս թվերը *) խոսում են այն մասին, վորապուաջին և չորրորդ կվարտանքների արտադրանքը

*) Բնագրի մեջ բերված տվյալները վերաբերում են միայն լայն սպառման տարեկաններին, այդ բասի

կազմում և ամբողջ տարվա գումարի $50^{\circ}/_0$ միայն։ Մոտավորապես նույնպիսի պատկեր եւ առիթու բամբակեղ, արգյունաբերությունը՝ վարձվածքները կազմում են ազգաբնակության զնածարգումները ապրանքների արժեքի մոտ $\frac{1}{5}$ ը։ Այսակը նկատելի կոճառում է առաջանում, մասնավանդ, չորրորդ կվարտալում (հուլիս - սեպտեմբեր), այսինքն արձակուրզների և ամարացին վերանորոգությունների դադարի շրջանում։ Այս կվարտալն անցած տարում ավել և լայն սովորողական առարկաների ամբողջ տարվա արտադրանքի միայն $22\text{--}25^{\circ}/_0$ -ը, ըստ վորում բամբակեղենի արտադրանքը յեղել է $23\text{--}24^{\circ}/_0$ ։

Այսպիսով, հուլիսից մինչև գեկտեմբեր, կիսամյակն աչքի յեւ ընկնում առաջարկի և պահանջի ամենամեծ ճեղքվածքով։ Այդ կիսամյակի վրա յեւ ընկնում ամբողջ տարվա գնողական փոնդի մոտ $55^{\circ}/_0$ -ը, իսկ թեթև արգյունաբերության արտադրանքի չափը կազմում է տարեկանի $50^{\circ}/_0$ -ը։ Հետեւապես, յեթե նույնիսկ ամբողջ տարվա մեջ պահանջը համապատասխաներ տարվա մեջ պահանջը

իսկական իմաստով։ Այդաեղ չեն մտել վոչ զլուզատնական մեքնաները, վոչ ապակու արգյունաբերությունը, վոչ մետաղները և մետաղյա գործվածքները։ Բայց յեթե հաշվառվի այդ ապրանքի երի արտադրությունն եւ, ընդհանուր պատկերը չի փոխվի։

սաջարին, այնուամենախիվ, սրացուցալին սար-
վա յերկրորդ կիսում մենք զարձյալ կունենալինք
շուկայի լարված գրություն։ Իսկ հենց այդ եւ
վկայում է այն մասին, վոր ապրանքալին սովոր
մեզանում զիսավորապես սեղոնային բնույթ
ունի

Վոր այդ հենց աղպակս է, լերիում և անցյալ
տարվա փորձից, Աւստենալով ապրանքային դե-
ֆիցիտ ամբողջ 1926-27 տարվա ընթացքում,
•հունվար ապրիլն աչքի ընկած շուկայի նկատելի
թժրությամբ։ Մեր տուարական կազմակերպու-
թյունները, փորոնք ընտելացել են վերին առար-
ճանի արագ շրջանառության, սկսել ելին նույն-
խեկ զանգատվել ապրանքակուությունից։ Շրջա-
նալին շատ կոռպերատիվ միություններ և կենտ-
րոնական բանկուազներ չը վերցրին այն չափ
բամբակյա գործվածքներ, զարքան նրանց բաժին
եր համառուժ պարմանազրերով, փորոնք կնքված
ելին Համամիութենական անկվածային սինդիկա-
տի հետ։ Ազգորինակ գեպքեր պատճել են նաև
կաշվեղեն ապրանքների և կաշվեղենների վերա-
բերմամբ։ Այն զնորդը, փորն առաջ ամեն ինչ
վերցնում եր առանց ջոկելու, ձեռնպահ եր
մնում զնումներ կատարելուց և սկսել եր ուշա-
դրություն զարձնել ասորպաթմինատի վրա։ Տնայ-
նազործական ապրանքների շուկան վաճառքի

Ճղնաժամ. եր ապրում: Ազգ վիճակին հասան նաև
Պավլովսկի և Տուլայի շրջանի տնտեսադործները,
փրունք պատրաստում են մետաղու մանրիկ
գործվածքներ Գործն այնակ հասագ վեր մի
քանի տնտեսագետներ այդ ժամանակ ոկտել եցին
խոսել ճշնաժամի բացահայտ նշանների մասին:
Իրականում, սակայն, այդ վոչ այլ ինչ եր, յեթե
վոչ սեղոնային մի դադար, վորը յերկրորդ
կվարտալում փոխվեց սեղոնային կենդանու-
թյան, վոր հետագայում վերածվեց ապրոնեային
սովոր:

4. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԸ, ՎՈՐՊԵՍ ՄԵՐ ԱՃՄԱՆ ՈՒՂԵԿԻՑԸ

Կարստ մենք ենք, արդյոք, մեր գարգացման
մուտքա փուլում կատարելուակես վերացնել ապ-
րանքավիճ սովոր:

Վերացնել ապրանքային սովոր նշանակում և
կամ նվազեցնել տղաբրնակության գնողական
պահանջը, կամ նկատելի կերպով մեծացնել լայն
շուկա մասնող ապրանքների արտադրությունն ու
առաջարկը, կամ թե այդ յերկու խնդիրներն ել
միաժամանակ լուծել մեզ համար։ Միայն այս
պարզաբաներում մենք կարող կլինելիք համա-
պատասխանություն մտցնել պահանջի և առա-
ջարկության միջև։

Բայց նկատելի կերպով պակասեցնել ազգարնակության գնողական պահանջը նշանակում է, ամենից առաջ, կրծառել գյուղացիության հիմնական մասսայի լիկանուաները։ Այս նպատակին հասնելու զլիափոր միջոցը զյուղարձևական մրերքների մրերման զնիւրի իշեցումը կարող եր նախդիսանալ։ Բայց մենք լավ զիտենք, վոր արդյունաբերական և զյուղատնտեսական ապրանքների միջն մինչեւ այժմ մկրատ գոյություն ունի։ Վորոշ քանակության ապրանքների զիմաց վոր մինչեւ պատերազմը զյուղացին վաճառում եր 1 ռուբլով, նա ստանում էր պետական և կոռպերատիվ հայթայթողներից 1926—27 թ. IV կվարտայում 1 ռ. 33 կոպեկ բայց զնելով վորոշ քանակության արդյունաբերական ապրանքներ, վորոնք մինչեւ պատերազմը նույն պես 1 ռ. արժելին, նա պետք է վճարեր անցուի առքան նույն կվարտայում, միջին հաշվով, 2 ռուբլի։ Թվերի աբորինուկ վիճակում մենք, բնականաբար չենք կարող հարց զընել զյուղացիական անտեսության լիկամտի նըգագման մասին, կամ վոր նույն բանն է, զյուղատնտեսական մթերքների հայթայթման զների իշեցման մասին—մասնավանդ վոր մենք պայքար ենք մղում մկրատը՝ ծալքերի հետագա սեղման համար։ Ճիշտ ե, առանձին գյուղա-

տնտեսական տպրոմքների զները բարձրացել են վոչ բոլորովին միատեսակ չափերով՝ մի քանիսը շատ առաջ են վաղել, մյուսներն, ընդհակառակն, հետ են մնացել։ Այդ պատճառով հավանութեն, մոռավոր ապագայում մեզ անհրաժեշտ կլինի քիչ ավելի համապատասխանություն մացնել առանձին զյուղատնտեսական ապրանքների մեջ, բայց այդ գների միջին մակերեսությունից իջեցնել անկարելի կլինի։

Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր մեր պայմաններում խոսք անգամ չի կարող լինել վոչ միայն աշխատավարձի իշեցման, այլ ևնույնիսկ զրագած մակերեսութիւնի պահպանման մասին։ Մեր պետությունը հենց այն պատճառով երան վորական, վոր կառուցելով սոցիալիզմը, վորն անհասանելի բարձրության կհացնի մոռակա սերունդների բարեկեցությունը, նա միւնույն ժամանակ իրեն խնդիր է զնում բարձրացնել աշխատավարձը և պրոլետարիատի կենսական մակերեսութիւն անընդհատ մեծացնել, զարգացման տվյալ աստիճանի վրա։ Այն ժամանակ լիբր կան պիտալիզմի պաշմաններում աշխատավարձի մակերեսությը եւական տառանումների յիշ լինթարկվում անտեսական կոնյունկտուրայի և բուրժուազիայի ու պրոլետարիատի գամակարգային ուժերի փոխարարելությունների հետևանքով, աշ-

խասավարձի կորտպիծը բանվար գասակարզի դիկաստությի պայմաններում անընդհատ բարձրանում է դեպի վեր:

Բայց յիթե առանձին բանվարների աշխատա, վարձի կրծատման և կախւնացման ճանապարհով ազգաքնակության վճարունակ պահանջի կրծատման միաբը պետք է կարականապես մերժի, ապա չեն կարելի, արգյուք, նույն նպատակին հանել յերկրում յեղած վառաւակի ընդհանուր գումարի կրծատման ճանապարհով։ Այստեղ մենք մոտենում ենք հիմնական շինարարության ինդղին։

Հիմնական օբյեկտուրյունն, այսինքն նոր ձեռնարկների կառուցումը և հաերի վերականավորումը տվալ լուրաքանչյուր մոմենտին առաջ և բերում բանվոր գասակարզի և զյուղացիության գնողական պահանջի զգալի աճուրու Զավոյի կամ ելեքտրական կայսնի կառուցումը պահանջում և ամենից առաջ բանվարական ուժ և շինարարական նյութեր։ Դրա հետևանքով ավելանում է գործափոր բանվորների թիվը և հետևապես, աճուր աշխատավարձի ֆոնդի։ Եթրջագայի գուղացիները վոչ միայն գործի յեն կտնչում իրեն կառուցող բանվարներ, այլև լրացուցիչ յեկանությունների նոր ստանումը՝ բար, շինափայտ, ավագ և ալին բերելու համար։ Ագրա-

լոր նոր յեկամուտները գործադրվում են առաջին հերթին, արգյունաբերական և զյուղատն անուական ապրանքներ գնելու համար, մինչդեռ կառուցվող ձեռնարկը վոչ մի արտադրանք չի տալիս։ Նա սկսում է պառող տալ միայն այն մոմենտից, յերբ նա գործի յե զրվում։ Այլ պատկեր ունի զործը յերբ լայնացվում և զնյություն ունեցող սյն ֆարբիկայի արտադրությունը, վոր գեռ լրիվ կերպով չի ոգտագործել իր սարքավորումը։ Լրացուցիչ հում նյութ զընելով և նոր բանվարներ վարձելով, մենք լրացուցիչ պահանջ ևնք առաջացնում շուկալում, բայց զրա գիմաց, մենք, համարյա միամատանակ ավելացնում ենք – և այն ել ավելի մեծ չափերով, – ապրանքների առաջարկը։ Հետեւ պես հիմնական օբյեկտուրյունը բաղաքի և զրուցի զնողական պահանջ և առաջեցնում, մինչ զեռ լրացուցիչ ապրանքալին դան զգածը, վորի հայար հենց կատարվում է նոր գործարանների և ֆարբիկաների կառուցումը, շուկա յե մանաւմ բավականաշափ ուշի

Եերենք մի քանի որինակներ այս մարք պարզանաւոն համար։

Ալ առ լողիքինաւալ Տրեսար կառուցում և գունագույք մետաղների մի զավոյ 45 միլ. արժողությունը։ Կոսուցումը սկսված է 1924 ։

25 թվին հներկա ձոժենառում կատարված և աշխատանքի սիախն ^{1/5} մտալը։ Զավոդի տարեկան արտուրութիւննը կկազմի՝ մեկ ու կես միլիոն փութցինկ, մոտ 1 միլ. գր.արժիք մոտ 45 հազ. գր. պորինձ. յեթե ի նկատի ունենանք այդ նոր ձեռնարկի արդյունաբործելիք գոսկին, արծաթը, ածուխը և աղին, ապա արթողջ արտադրանքի արժեքը հավասար կլինի 20 միլիոն ռ. Բայց այժմս աշխատում է զրվոդի շատ անհշան մտալը, իսկ նա գործի յերգելու— և այն ել վոչ լրիվ կերպով—միայն 1930—31 թվին։ Այս նշանակում ե, վոր մենք գեռ յերկար ժամանակ պետք ե տասնյակ միլիոններ ծախսենք, վորոնք) կան նոր, ճիշտե, նակայական ապրանքային զարգված ներ, բայց միայն 4—5 տարուց հետո։

Յուզոստի կերչի մետաղագործական գավողը. — Նրա արժեքը, յեթու վերցնենք սիախն առաջին հերթի աշխատանքները, կը կազմի 32^{1/2} միլն. ռ.ք. Զավոդի կառուցումը սկսվել է 1925—26 թ., և ավարտվելու յեր 1728—29 թ., և միայն այն ժամանակի ե տարրու տարեկան 18 միլիոն գթ. չուգան և մոտ 14 միլն. գթ. գրասոցը։ Այս արտադրանքի արժեքը կը համարի 20 միլիոն ռուբլու։

Մոսոնի գուղաժամական մեթենականացման գավողի արժենալու յեր, բանվորնե-

րի բնակության շինությունների հետ միասին, 45 միլն. ռ.ք., վորից մինչեւ այժմ ձախորդված է 6,700,000 ռ.ք.։ Շինարարական աշխատանքները սկսվել են 1926 թվին և ավարտվելու յեն 1931 թվին։ Մինչեւ այդ տարին, մենք պետք ե ծախսենք գեռ ելի համարյա 50 միլն. ռ.ք.։ Միայն 5 տարուց հետո մենք կըսկսենք ստանուլ տարեկան արտադրանք 36,5 միլիոն ռուբլու։

Կամ մի այլ որինակ թեթև արդյունաբերության ասպարիզից։ Լենինգրադ տեքստիլ տրեսուը 1926 թվի ամբանը ձեռնարկել է առողջ Միության մեջ ամենազորեղ տրիկոտաժի և գուլպալին գործվածքների ներկարարական և կարելու ֆաբրիկայի կառուց լանը։ Ֆարբերայի ընդհանուր արժեքը վարոշվում է 12,6 միլիոն ռ.ք., վորից արգեն ծախսված է 4 միլն.։ Նրա տարեկան արտադրանքը կը կազմի ավելի, քան 27 միլն. ռուբլի։ Ֆարբերիկան գործի յերգելու 1928 թվի մայիսին և կըսկսի լրիվ աշխատել միայն 1930—31 թվին։

Բայց այս որինակները տալիս են միայն տամանձին պատկերացում այն խնշոր գնուզական պահանջի ժամանք, վոր առաջանում է մեր շինարարության հետեանքով, վոր սիհետի թված բոլոր 4 ձեռնարկների արժեքը չի անցնում 135

միլիոն ռուբլուց Յեթե մենք վերցնենք մեր արգունարերական շինարարությունն ամբողջությամբ, ապա կահսնենք՝ վոր նրա մեջ դրվել և 1926—27 թվին մոտ 1000 միլն. ռ. և 1927—28 թ. դրվելու յե մոտ 1 200 միլիոն ռ. Այս գումարների առուծի բաժինը բանվոր դաստկարգի և գյուղացիության յեկամունքներն են կազմում, վորոնք շուկա յեն գուրս գալիս, իրեն ապրանքների գնորդների լրացուցիչ մասսա: Բայց յեթե այդ արդպէս և, ապա ապրանքային սովի վոչնչացման համար բավական կլիներ հրաժարվել Դնեպրոստրոմի և Սեմիրեչինուկի յերկաթզծի կառուցման աշխատանքներից և հերթից հանել մի տասնյակ համեմատաբար փոքր կառուցումներ: Պարզ և, սակայն, վոր այդ քաղաքականությունը միանգամացն կարճամիտ կլիներ: Վարտինեան հիմնական շինարարությունը, և, մանավանդ, ծանր արգունագործության ընդլանումը, — ինչպես մենք տեսանք բերած որինակներից, — բարա յեն պատրաստում մասավոր ապագայի համար և նախազբայաներ են ստեղծում առաջարկի և պահանջի միջն յեզած ներկա անհամապատասխանության վերացման համար: Բացի այդ մեր հիմնական ախտանքների չափի այս կամ այն գդալի կրծառամբն, անհրաժեշտորեն իր հետերց կը բերեր

աշխատող բանվորների թվի կրնաւումը: Այսպիսով, ուսկայի լիակատար բարվոյ վիճակը կարելի կլիներ գնել միայն զործազրկիների բանուկը մեծացնելով յեվ վաղվա որի ամենը մոռացուրյան տարդ: Միանգամայն պարզ է, վոր մենք չենք կարող գնել յեվ չենք գնում այդ նախապահնով:

Սակայն այստեղ կարելի յե այսպիսի մի առակություն բերել: Զե վոր, հիմնական հասցումներ - և այն ել շատ մեծ չափերով, կատարվում են և բուրժուազիայի կողմից: Զե, կապիտալիզմի ժամանակ ել այդ նոր կառուցումների ծախքերը պետք ե տուաջացնեն պահանջի համեմատական ավելացում: Ել ինչու աղբանքային սովոր, այդ զեպքում, մի արտասահմար ցերեութ և հանդիսանում կազի տալիստական հասարակության պայմաններում.

Այս փաստի բացատրությունը թագնված և ամենից առաջ գնենք մեխանիզմի մեջ: Կազի տալիստական կարգերում արդյունաբերության, արանապորտի մեջ դրվող գումարները հատկացվում են վոչ թե հավասարաշափ և ատրեց տուրի աճող գումարներով, այլ շտա կարուել թը ուշըներով: Կապիտալիզմը, ինչպես հայտնի յե, զարգանում է զգնաժամերից և անկումներից անցնելով զեպի կենզանություն և վերելք: Ճրգ-

համամերի շրջաններում արդյունաբերության համար կատարվող հատկացումներն ընկնում են և հասնում նվազագույնը չտփերի՝ Ընդհակառակըն, վերելքի շրջաններում շինարարությունը հասնում է հսկայական չափերի. Այս շրջաններում, այդ պատճառով, բարձրանում է աշխատանք ունեցող բանվորների թիվը և աճում է աշխատավարձի ֆունդը. Քաղաքներին արդյունաբերության համ նյութ և պարենավորման միջոցներ մատակարարող գյուղատնտեսության յեկամուտները նույնպես աճում են. Այսուեղից՝ ընդհանուր աճումն վոչ միայն արտադրության միջոցների, այլև մոլովքական մասսաների բարպաժան առարկաների. Մակայն, արդյունաբերության արտադրանքի աճումը չի համարում պահանջի սահմանին, քանի վոր կառուցվող ձեռ նարկները սկսում են ապրանք նեսել շուկա միայն այն մոմենտից, յերբ նրանք գործի լին դրվում. Այսպիսով, կապիտալիզմի վերելքի ժամանակ ել մենք ականատես ենք լինում բավականաչափ կտրուկ բաժաննան առաջարկին պահանջի միջև Բայց կապիտալիստական տարերը հեշտ է գուրս գալիս այդ փիճակից՝ նա ուղղակի բարձրացնում է զնները. Վորպեսզի ցույց տանք, վոր այդ ճանապարհով իրոք կարելի լի համել շուկայի հավասարակցության, մեզ

պատկերացնենք հետեւալը. Յենթադրենք թե արդի սնաբերական վերելքի ազդեցության տակ ժողովրդական լայն մասսաների զնողական պահանջն աճել է 20% -ով. Յեթե ազգաբնակության աշխատավորական մասսալի լիկամուտների աճմանը չուղեկցելին վոչ խնայողությունների մեծացումնելը, վոչ էլ զների ընդհանուր մակերեւութիւնը բարձրացումն, այդ գեղքում իվերջու մենք կունենացնենք լայն սպառման տուրկաների պահանջի 20 տոկոսային բարձրացում. Բայց խնդրի ելությունն այն է, վոր պահանջի աճման փաստն ինքնին անհրաժեշտաբար առաջացում է զների բարձրացում. Հենց այս պատճառով ել վերելքների շրջանները, այսինքն արդյունաբերական խոշոր շինարարության ժամանակը, կապիտալիզմում միշտ ել բնորոշվում է թանգության ընդհանուր բարձրացմանը. Յեթե մեր գիտողության լինթակա դեպքում զներըն աճեցն 20%, ապա մեր սպառողը սահմանակին չնայելով իր յեկամուտների բարձրացմանը, բավականանալ ապրանքների նախկին նաև կունելով. Իսկ յեթե զներն աճեն միայն 10% -ով, այդ գեղքում գնորդը, չնայելով նրա յեկամուտների 20% աճմանը, կարող եր ձեռք բերել միայն 10% (δ զրիտ. 9%) ավել ապրանք, քան առաջ. Այսպիսով, շուկայում առաջանում

ե վորոշ հավասարակշռություն գների բարձրացած մակերեւութիւն հիման վրա:

Պետք է, սական, նկատել, վոր արդյունաբերական վերելքների ժամանակ գների աճումն ընդհանրապես հետ և մեռւ բանվորների և զյուղացիների յեկամոււների աճումից: Այս նշանակում է, թե պահանջը բնակչութեամբ աշխատավայրի, այսու ամենայնին, աճում է: Այս պիսի ողոմաններում կարող է պատահել, վոր գործարանների և ֆաբրիկաների կառուցման հենց նոր ձեռնարկած արդյունաբերությունը չկարողանա բավարել պահանջի չափերին ընթացիկ արագագությամբ: Բայց քիչ-շատ զարգացած կապիտալիսական յերկիրներն այդ գեղքում նեղ վիճակի մեջ չեն ընկնում: Յեթե ընթացիկ արտադրանքը չի բավականանում պահանջը ծածկելու համար, ապա կան ապրանքային պատարաներ, վորոնք սկսում են ծծվել և կրծատվում են մինչև այն ժամանակ, յերբ արտադրության լայնացումն արդյունաբերական գործադքների նոր կուտակումներ կառաջացնի պահեստներում: Ապրանքային պաշարներն, այս պիսով, իրենցից մի հսկայական, ամբար են ներկայացնում վորից, կարելի յև վերցնել աճող սպասողական պահանջը բավարարելու համար:

Չի հետեւմ այսակից, վոր մենք պեսք ե

զբաղենք պաշարների կոտակման գործով: Ինարկե, հետեւմ ե: Բայց, վորպեսզի կարելի լինի հասկանալ, թե ինչպիսի միջոցներ են պահանջվում զբանաբառ, անհրաժեշտ և մի քանի խոսքով կանգ առնել այս հանգամանքի վրա: Նախապատերազմյան Ռուսաստանի ապրտնքային պաշարները հավասար եին տարեկան արտադրանքի չափին: Մեր պաշարները, կոր թվերով, հավասար են, արդյունաբերության $\frac{2}{3}$ /2 ամսվա արտադրանքին:

Առաջներում տիրող մրցությունը և մեծաքանակ ձեռնարկների ցրվածությունն առաջացնում էին ապրանքային պաշարների մեծ փոշիացում:

Բայցի արդ, ապրանքների մի նշանավոր մասսան ել շարունակ փակված եր պահեստներում զուտ սպեկուլյատիվնպատակների համար:

Սկզ ե յերկրի վիճակը մեզ մոտ: Մեր մեծաքանակի բարձր սղակը—սինդիկատները հաճախ իրենց ձեռքի մեջ միացնում են արդյունաբերության ձյուղերի ամբաղջ արտադրանքի վաճառահանումը: Մեր ըրջանացին կոռպերատիվ միություններից (կոռպերատիվ մեծաքանակի հիմնական ողակներից) յուրաքանչյուրը սպասարկում է միջին հաշվով մոտ 120 սպասողական ընկերություններ կամ ավելի, քան 200 խանութ

փոխարինելով մինչպատերազմը յեղած մի տասնյակից ավելի մեծաքանակի պահեստներ։ Հենց այս պատճառով ե, վոր ապրանքները շուկային անընդհատ մատակարարելու համար, մեզ ավելի քիչ ապրանքային պաշար ե հարկավոր, քան ցարական Ռուսաստանին։ Ճիշտ ե մեր ներկա ապրանքային պաշարները բավարար չեն։ Բայց յեթե արդունաբերությունն ընդլայնվեր այնչափ, վոր չվնեյին դեֆիցիտային ապրանքներ, այդ դեպքում մեր առևտրական ցանցը կարող կլիներ ապրանքներն անընդհատ մատակարարել շուկային, ունալով 4 ամսվա պաշար։ Սակայն պաշարների արդորինակ մեծացումը (յեթե խոսենք միայն լայն գործածության արդյունաբերական ապրանքների մասին) կպահանջեր լրացուցիչ կերպով, մոտավորապես, 800 միլն. ռուբլի դնել առևտրի մեջ։ Այս կնշանակեր, իր հերթին իջեցնել ծախսերը մեր տնտեսական շինարարության այլ ճակատներում՝ կրծատել արդյունագործության մեջ դրվող հիմնական գումարները։ Մենք բերում ենք այս նկատառությունները նրա համար, վորպիսզի ցուց տանք, թե ինչ դժվարությունների հետ են կապված յերկրի համար միանգաման անհրաժեշտ ապրանքային ռեզերվների կուտակությունները։

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԵՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մենք տեսանք, վոր լայն գործածության արդյունաբերական ապրանքների պահանջի լիակատար բավարարումը կապված է այնպիսի ձեռնարկումների հետ, վորոնք մեծ չափերով կը նեղելին արտադրության ուժեղացումը հետագայում։ Բայց այդ բոլորովին ել չի նշանակում, թե մենք կարող ենք ապրանքային սովոր նշված սրացման վրայից թեթևակի անցնել։ Ընդհակառակն, պահպանելով մեր տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները, վորոնք ուղղված են առաջին հերթին գեպի ծանր արդյունագործության վերելքը, կառավարությունը վորոշել է ձեռք առնել մի շարք միջոցներ լայնացնելու համար լայն շուկա բաց թողնվելիք արտադրանքի չափերը։

Այսպես, 1927—28 թ յենթադրվում եր վերամշակել 21,700 հազար փութ բամբակ, այսինքն ավելի շատ, քան անցյալ տարի։ Բայց մի մերժի վրա 7 ու կես $\frac{1}{2}$ մանածի գործադրումն (հյուսվածքի խտացում) այնտեղ հասցըք, վոր շուկա բաց թողնվելիք հյուսվածքի քանակը պետք ե աճեր միայն $2,4 \frac{1}{2}$ -ով, չնչին չափերով ավելացնելով մի անձի համար գործադրվող նորման։

Կառավարությունը վորոշեց մեծացնել բաժբակի վերամշակման ծրագիրը՝ 200 հազ. փթռվ, այսինքն հասցնել այն 22,400 հազար փթի։ Դա կը բարձրացնի մի անձի սպառման նորման տարեկան 14 մետրից մինչև 14,7 մետր (5% ավել, քան 1926 – 27 թ.): Շուկա բաց թողնվելիք ապրանքային զանգվածի արժեքը կը բարձրանա 50 միլ. բուրով, իսկ քանակը — 100 միլն. մետր՝ հանդեպ առաջուց հաստատված պլանների։

Նման միջոցներ ձեռք են առնված նաև բրդե հյուսվածքների արտադրությունը լայնացնելու համար։ Այս ապրանքը պատկանում է ամենապակասափոքների շարքին՝ արտադրության ընդլայնումը, ի նկատի առնելով արտասահմանից մեծ քանակությամբ նուրբ բրդերի ներմուծման անհրաժեշտությունը, բացահայտորեն չի համում բարդաբի և զյուղի առաջադրած պահանջի զարգացման մեծ թափին։ Նախնական ծրագրներով յենթադրվում եր, համարլա թե անփոփոխ թողնելով մի անձի գործածության նորման, բարձրացնել բրդեղենի քանակը շուկայում՝ 1926 – 27 թ. համեմատությամբ՝ միայն $3,5\%$ ։ Կառավարության վորոշումը՝ բրդեղենի արդյունաբերության արտադրական ծրագիրը լայնացնել 100 հազ. փ. բրդով, սպառման նորման կավելացնի 7% տոկոսով և շուկային կրտա լրացուցիչ հյուսվածք-

ներ 30 միլն. սուբլու։ Այս, ի հարկե, նշմարելի լավացումն ե բրդեղենի շուկայի համար։ Բայց պետք ե ուղակի ասել, վոր չը նախած արտադրության բարձրացմանն, այս ապրանքը դեռ էրկար ժամանակ ե գերիցիալին ելինելու։ Մյոպիսի պայմաններում միջոցները պետք եր ձեռք առնելով վորպեսզի մահուդն իրոք ընկներ բանվորի և զյուղացու ձեռքը և վոչ թե միջնորդառնորդականների։ Այս նպատակի համար կարգավորող որդանները վորոշել են լրիվ կերպով մահուդեղենն մատակարարել կարի արդյունաբերությանն այն պայմանով, վոր նա իր ամողջ արտադրանքը հանձնի կոսպերացիալին՝ բանվորներին և զյուղացիներին վաճառելու համար։

Բացի այդ, լայնացվելու յետիմի յեվլիարի (րիբեղի) յեվ սեխիր արտադրությունը և բարձրացվելու յերեսի ներմուծումն արտասահմանից։ Անկամացալին արդյունաբերության ծրագրի լայնացման հետ միասին այդ կտա 100 – 120 միլն. մոք. լրացուցիչ ապրանք և համապատասխան կերպով կը թուլացնի ապրանքալին սովու։

Ինչ վերաբերում ե շաքարի մատակարմանը, ապա պետք ե ասել վոր սպառողի վախն այս ասպարիզում միանդաման անհիմն ե։ Անցյալ տարվա վերջին և ընթացիկ տարվա սկզբին մեր շուկայում ընդհատումներ տեղի ունեցան շնորհիվ

փոխանցվող պաշարների աննշանությանը՝ առ
1-ս հոկտմբեր նրանք իջել ելին 1,400 հազ. փթի
այն ժամանակ, յերբ ազգարնակության սպառ-
ման քանակը կազմում է ամսական 4,900 հազ-
փութ։ Այս տարի շաքարի վերաբերմաբ մենք
կարող ենք միանգամայն հանգիստ լինել։ Յեթե
շաքարի արտադրությունն անցլալ տարի, ճակըն-
դեղի անբավարար բերքի հետևանքով, տվել է
միայն 53,4 միլն. փութ 58,6 միլն. փթ. պա-
հանջի դիմաց, ապա այս տարգա բերքով արտա-
դրական ծրագիրը հասնում է մինչեւ 81,5 միլն.
փթի։ Այսպիսով, մենք ունենալու յենք, առնվա-
գն, մեկ ու կնո անգամ ավելի շաքար, քան ան-
ցլալ տարի և կարող ենք վոչ միայն լրիվ կեր-
պով բավարարել շուկայի պահանջը, այս զգալի
կերպով ավելացնել մեր պաշարները։

6. ՊԱՐԵՆԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՇՈՒԿԱՅՈՒՄ


Բանվոր դասակարգի և գլուղացիության բա-
րեկիցության ընդհանուր բարձրացումը, վոր հե-
տևանք եր պրոլետարական հեղափոխության, մեծ
փոխանցություն մացրեց աշխատավորական մաս-
սաների անդի մեջ։ Աշխատավարձի բարձրացման
զուգընթաց ավելացավ ավելի արժեքավոր մթերք-
ների սպառումը և հետին պլանն անցավ նվազ

սննդաբար և եժան մթերքների սպառումը։ Մեր
կենտրոնական վիճակագրական վարչությունն ար-
գեն մի քանի տարիների ընթացքում հետազո-
տումներ ե կատարում բանվորների և ծառայող-
ների սննդի վերաբերյալ, ընդգրկելով ամեն ան-
գամ մի քանի հազար բավականաշափ ցուցադր-
բական տնտեսություններ, վորոնց հիման վրա
կարելի յե դատել ամբողջ պրոլետարիատի սննդի
մասին։ Այդ հետազոտությունները տալիս են հե-
տեւալ պատկերը (տես աղյուսակը 44 յիրեսում)։

Ե՞նչ են ասում այս թվերը։ Կանգ առնենք
ամենից առաջ հացի վրա։ 4 տարվա ընթացքում
հացի ընդհանուր սպառումն ընկնում է 1,222-ից
մինչեւ 1,074 գրամքայի, այսինքն 8 տոկ. Ավելի
մեծ անկում է տալիս ալյուրը (51 %), բայց
դրա դիմաց աճում է ցորենալյուրի սպառումը՝
ավելի շան մեկ ու կես անգամ։ Նույնպես ըն-
կնում է և զանազան հատկների և լորու, կար-
տոֆիլի, բանջարեղենների և բուսական յուղերի
սպառումը։ Բայց դրա հետ միաժամանակ ուժ-
գնանում է կենդանական ծագումն ունենող
յեվ օսմարային նյութերի սպառումը։ Յեթե
1923 թվի համար այդ մթերքների սպառումն ըն-
դունենք 100, այդ դեպքում կարելի կը լինի զիտել
որանց գոփոխումները հետագա տարիների ընթաց-
քում հետեւալ դիագրամներով (տես 45—46 յերես)։


Մի շնչի որական պարենը բանվորների և
ծառայողների ընտանքում փետրվարին:

№ ըստ կազմի	Մթերքների ԱՆՈՒՆԸ	Բնկնամ եր գրվանքու			
		1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.
1	Հայամթերներ	1,222	1,202	1,074	1,123
2	ալյուր համարի	0,575	0,449	0,323	0,282
3	Դրանց » ցորնի	0,467	0,595	0,635	0,712
4	մեջ կրուպանիր և լորի	0,165	0,145	0,104	0,104
5	Կարտոֆիլ	0,846	0,785	0,638	0,542
6	Բանջարեղին և մրգեր	0,313	0,300	0,290	0,276
7	Շաքար և շաքարանյութ	0,044	0,057	0,079	0,102
8	Մ ի ս	0,230	0,260	0,373	0,402
9	Զ ս ւ ի	0,080	0,066	0,068	0,069
10	Ցուղեր	0,069	0,071	0,070	0,075
11	Ճարդ	0,012	0,018	0,020	0,017
12	Դրանց կովի լուղ	0,023	0,021	0,025	0,035
13	մեջ բուսական լուղ.	0,034	0,032	0,025	0,023
14	Կաթ և այլ կաթնամթեր	0,336	0,376	0,481	0,585
15	Զ ս ւ ս	0,007	0,011	0,016	0,018
16	Արգ ամրող սնունդը	3,151	3,098	3,064	3,194
17	Գրա- դական ծագ.				
18	Դրանց մթերներ կենդանական	2,463	2,346	2,081	2,068
		0,688	0,752	0,983	1,126





Ավելի սննդաբար և արժեքավոր սպասողական
մթերքների մի շնչին հասանելիք նորմաների
աճումը 1923—26 թ. (1923 թ. նորման ընդուն-
ված և ինչպես 100).

Սորենականութ



Զու

Դաշտը և շախմատային
նյութեր

Այս դիագրամները ցույց են տալիս, վոր 4 տարվա ընթացքում աճել և շաքարալին նյութերի սպառումը $133^0/₀$, մսին՝ $75^0/₀$, ճարպինը՝ $42^0/₀$, կովի լուղինը՝ $52^0/₀$, կաթի և կաթնածթերքներինը՝ $74^0/₀$ և ձուն՝ $157^0/₀$: Յեթե մենք վերցնենք բուսական մթերքների որական պարենի քաշը (պայտկը) կերևա վոր այս տարիների ընթացքում նա իջել և $16^0/₀$ կամ մի փեցերորդով ($2,463$ գրվանքալից՝ $2,0689$): Այլ և պատկերը կենդանական ծագում ունեցող մթերքների պարենի վերաբերյալ: Նույն տարիների ընթացքում նա բարձրացել և $64^0/₀$ կամ մոտյելիու յերրորդով: Յեթե բանվորների և ծառայողների գործածած զանազան տեսակի պարենները հաշվելու լինենք կալորիաներով (այսինքն որդանիզմին տված նրանց ջերմության միավորներով), ապա կըստացվի, վոր մննդառունշանակությամբ ավելի արժեքավոր մթերքների գրաւանները (ցորնի ալյուր, միս, ճարպեր, կաթ կաթնածթերքներ, ձու և շաքար) 1923 թվին կազմում եղին միայն $48^0/₀$ կամ ամբողջ պարենի կիսից պակաս, իսկ 1926 թ.՝ $71^0/₀$ կամ համարյա թե յերեք քառորդով: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բանվորի մննդից ընկնում ե մեծածավալ, կոպիտա, նվազ մննդարար և տպելի եժան մթերքների բաժինը և փոխարինվում

ավելի սննդաբար և ավելի թանգ մթեռքներով։
Դժբախտաբար, մենք չունենք շատ թե քիչ
հաստատ տվյալներ մինչպատերազման սպառման
ժաման, սակայն հազիվ թե կարելի լինի կասկա-
ծել, զոր մի շնչի սպառման նորման բարձր և,
քան մինչհեղափոխական ժամանակները։ Յեթե
դատելու լինենք յերկաթուղիների փոխազդու-
թյունների հիման վրա (ստացումց հանած առա-
քումը), այդ գեղքում որ, Մոսկվայի համար կը
ստացվի մի շնչի զործածության հետկյալ չափը՝

1913 թ. 1926/27 թ.

Ցորնի ալւուր (փթերով)	5,4	7,2	ավել և 33%
Կովի լուղ (գրգանքան.)	8,0	20,7	» 160 »
Զու (հատերով)	123,0	219,4	» 78 »

Սրան պետք է ավելացնել, զոր շնչի սպառ-
ման նորման հաշվելուց այդտեղ ընդունված ե-
այրող ալգաբնակությունը, զորի մեջ մանում
են բուրժուաներ և այլ ձրիակերներ։ Բայց վո-
րովինեաւ հեղափոխության ավելով սրբված այդ
ձրիակերների թիվը 1913 թիվն անհամեմատ ա-
վելի մեծ եր, քան այժմ, ապա ուրմն բանվորի
և ծառալողի մի շնչի սպառման նորման ել այն
ժամանակ անհամեմատ տվելի ցածր եր, քան
այդ ժաման խոսում են մեր աղյուսակները։

Մենք մանրամասն կանող չենք տանի զու-
ղացիության սպառման վրա։ Յույց տանը մի-

այն այն, զոր արտօնեղ ել են առաջանում նույն-
պիսի ցատկումներ, ինչպես և բանվորության
սննդի մեջ։ ԽՍՀՄ-ի սպառողական շրջաններում
4 տարվա ընթացքում սպառումն աճել ե՝ ցորեն
ալյուրինը $53^0/0$, շաքարինը և շաքարանյութե-
րինը 227 տոկոս, միաը հավասար և $143^0/0$, ճարպը՝
109 տոկոսի, կովի լուղը՝ 41 տոկոսի, կաթը և
կաթնամթերքները՝ 93 տոկոս, բուսական գրու-
պան ընկնում և 16 տոկոս, իսկ կենդանականը
բարձրանում և 91 տոկոսով։ ԽՍՀՄ-ի արտա-
զրող շրջաններում մի շնչի սպառման նորման
տալիս և հետեւալ պատկերը՝ ցորենալյուրի հա-
մար՝ 32 տոկոս, շաքարի և շաքարանյութե-
րի՝ 337 տոկոս, մի՛ 231 տոկոս, ճարպի՝ 220
տոկոս, կովի լուղի՝ 60 տոկոս, կաթի և կաթ-
նամթերքների՝ 82 տոկոս և ձվի համար՝ 152
տոկոս։ Միջին հաշվով բուսական գրուպան ընկ-
նում և 11 տոկոսով, իսկ կենդանական ծագումն
ունեցողը բարձրանում և 94 տոկոսով։

Աշխատավորության սպառման այսորինակ
աճումը, ի հարկե, հանդիսանում է չոկտեմբեր-
յան հեղափոխության խոշորագույն նվաճումնե-
րից մեկը։ Բայց պետք ե ասել, զոր սննդի սպ-
առարիզում հիշած փոփոխությունների համար
մեր զյուղատնակառությանը զեռ ամրողավին
նախապատրաստաված չեւ։

Այս ե ընդհանուր պատճառն այն ընդհանումների, վորոնք առաջացել ելին և առաջանում են քաղաքալին կենտրոններին և սպառող շրջանների դրուղացիությանը սննդի մթերքներ ժամանակարելու գործում,

Բնակչության մեջ լուրեր են առաջածվում թե մենք պարենավորման շատ մթերքներ ենք արտածում դեպի արտասահման։ Բայց այդ կատարյալ դատարկ խոսակցություն ե։ Հացի և, մանավանդ, ցունի ալյուրի խնդիրը մենք առանձին քննության նյութ կը դարձնենո։ Կանգ առնենք դեռ յուղի և ձվի արտածության վրա։ Այդ մթերքներից ուղարկվել են արտասահման՝

1913 թ., 1925/26 թ., 1926/27 թ., 1926/27 թ.

համեմատած

1913 թ.

ՏԱՄ.

Ցուղ (հազար գթեր)	4,763	1,663	7,849	38%
Չու (վագոններով)	24,800	4,140	5,865	24

Այլ խոսքով, մենք արտասահման ենք ուղարկում յուղը յերեք հինգերորդով, խոկ ձուն յերեք քառորդով պակառ, քան նախապատերազմյան արքին։ Բայց, գնուցե մենք այդ ել չը պետք ե ուղարկելինք։

Այդ հարցին պատասխանելու համար, պետք ե իմանալ թե ընդհանրապես ինչի համար ենք մենք ապրանքներ վաճառում արտասահմանին։

Յուրաքանչյուր մի բանվոր և գյուղացի զիտե, վոր արտասահմանից մենք պետք ե գնենք մի շարք ապրանքներ։ Բայց մենք վերցնենք միայն ան, առանց վորի մենք ըուլուովին չենք կարող ապլիկ

Անա մանրմասն ցուցակն այն ապրանքների վորոնք մեզ մոտ են բերվել արտասահմանից 1926 – 27 տնաւ. տարում (հազար ոուրիներով)՝ Արդյունաբերութ. և արանապարտի կահավորումներ 150,403 Հում նյութեր 3 9,090

Այդ թվի մեջ

Բամբակ	.	.	.	131,504
Բուրդ	.	.	.	51,122
Սև մետաղներ.	.	.	.	11,275
Գունավոր մետաղներ	.	.	.	45,411
Հում կաշվեղեն	.	.	.	38,630
Այլ	.	.	.	51,145
Կիսագործվածքներ	.	.	.	91,177

Նույնի մեջ

Կաշի մշակված	.	.	.	7,517
Թուղթ և ստվարաթուղթ	.	.	.	18,439
Գուներ	.	.	.	11,088
Գարագալին նյութեր	.	.	.	12,251
Այլք	.	.	.	41,882
Վառելիք	.	.	.	5,584

Դրուզանատ.	համար	(պյուզանատ.)
մերենա և այլն) . . .	31,504	
Ամբողջ ներժուծութիւնն արտադրական		
նովաստակների համար. 607,758		
Կենսամթերքներ (բրինձ, թեյ, և այլն)	64,213	
Լայն դործածության առարկաներ 18,680		
Ամբողջ ներժուծութը սպառողական		
նովաստակների համար. 82,893		
Զանազան ապրանքներ	22,040	

Ընդամենը 712,691

Բոլոր այս ապրանքները մենք կարող ենք
գնել միայն արտասահմանյան դրամներով (վալ-
յուտակով), բայց վորպեսզի ստացվեն այդ դր-
րամները մենք անպայման պետք են մեր ապ-
րանքները վաճառենք արտասահմանում։ Զար-
սահմանին վաճառված ձվաների գիմաց, յուղի
դիմաց 1926/27 թվին մենք սացել ենք մոտ
63 միլն. ռ. Յեթե մենք հրաժարվելինք այդ
մթերքների վաճառքից, այդ գեպքում ստիպված
պետք են լինելինք հում նյութերի, կիսագործ-
վածքների և սարքավորման ներժուծութը կըր-
րանքների ցուցակը դիտել համոզվելու համար,

որ վոչ մի հոգված դրանցից չեր կարելի կըր-
ճառել առանց հոկալական փաս հասցնելու մեր-
անակառիթանը։ Կրծատել սորբավորման ներ-
ժուծութը—նշանակում են հրաժարվել ամբողջ
մուծութը—նշանակում են ծրագրված լայնացումից։
արգյունաբերության ծրագրված լայնացումից։
Կրծատել բամբակի և բրդի ներժուծութը—նշա-
նակում են ավելի խորացնել անկվածալին զործ-
վածքների սովոր։ Նույն ել հում կաշվեցնին,
վաճքների նյութերի, զույների ներժուծման
դասին և այն։ Վերջապես, այս բոլորը միասին
մասին և այն։ Վերջապես, այս բոլորը միասին
վերցրած, կավելացներ գործազրկության չափե-
վերցրած, կավելացներ գործազրկության չափե-
վերցրած են կենսամթերքներին (բը-
րը, ինչ վերաբերում են կենսամթերքներին (բը-
րը, թե մենք շատ մեծ քանակությամբ ենք
սիր և ձու արածում։ Ծնդհակառակն, մենք
շատ քիչ ենք արտահանում այդ մթերքներից։
Մեզ համար ինդիք գարձնելով լավացնել բան-
վոր զասակարգի մատակարարման գործը, մենք
միևնույն ժամանակ պետք են համար աշխատանք
առանենք մեր արտահանությունն ուժեղացնելու
համար։ Վորովհետեւ պետք են հաստատ հիշել, վոր
վաճառված յուղի յուրաքանչյուր մի փու-

լլապիսով, խոսք չի կարող լինել այն մա-
սին, թե մենք շատ մեծ քանակությամբ ենք
յուղ և ձու արածում։ Ծնդհակառակն, մենք
շատ քիչ ենք արտահանում այդ մթերքներից։
Մեզ համար ինդիք գարձնելով լավացնել բան-
վոր զասակարգի մատակարարման գործը, մենք
միևնույն ժամանակ պետք են համար աշխատանք
առանենք մեր արտահանությունն ուժեղացնելու
համար։ Վորովհետեւ պետք են հաստատ հիշել, վոր

թը — գա արտասահմանյան բանբակի մի գիթի
կնումնե, վորը մշակելուց հետո տալիս է 100
մետր պատրաստի հողավածք, իսկ արտահանած
մի վագոն ձվի վաճառքից զույցած արժեքը մեզ
տալիս է այնքան բամբակ, վորքանը բավական
է, վորպեսզի ներկա նորմաներով չիթ մատու-
կարարվի մոտ 2000 մարդու:

7. ՀԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այնչափ, վորչափ հացի և, մանավանդ, ցուրենալուրի մատակարարութիւն այս տարի կապված ե մի շարք դժվարությունների հետ, անհրաժեշտ ե այդ հարցն առանձին քննության նյութ դարձնել:

Ինչով են բացատրվում հացի շուկայի ընդհանուր հատումները։ Ամենից առաջ պետք է նկատել, վոր կենտրոնական ստատիստիկական վարչության ավաների համաձայն, հացի բերքը պակաս է, քան անցյալ տարի։ Հաճարի բարձր բերքի հետ միասին, 1927 թվին մենք ունենք այլ հացահատիկների բերքի պակաս՝ ցորնի՝ 117 մին. փութ, գարու՝ 50 մին. փութ. և վարսակի՝ 80 մին. փութ։ Դրա հետ միասին բերքի աշխարհագրական դիրքն ավելի նվազ նպաստավոր է, քան անցյալ տարի։ Հենց այն շրջանները, վորոնք աչքի յեն ընկնում ավելի մեծ ապ-

բանքայնությամբ (այսինքն հավաքած հացի ավելի մեծ տոկոսն են վաճառքի հանում), այս տարի ցածր բերքատվություն ունեն: Հետեւալ թվերը ցույց են տալիս, թե ցորնի հունձն այդ շրջաններում վորքանով ե ցածր, քան անցյալ տարի: Այլը՝

$\Sigma \sigma_{\text{tot}} h_{\text{coll}} / h =$ $\eta_{\text{coll}} - 32$	\hat{m}_{coll}	$\phi_{\text{coll}} / \text{deg}$	$14^0 / _0$
$\eta_{\text{coll}} - 51$	\hat{m}_{coll}	$\phi_{\text{coll}} / \text{deg}$	$49^0 / _0$
$\eta_{\text{coll}} - 20$	\hat{m}_{coll}	$\phi_{\text{coll}} / \text{deg}$	$44^0 / _0$

Ապրանքային թելուկթի տեսակետից կարևոր
շըջաններից միայն Ռուկրանան է ցործի բերքի
բարձրացում տալիս (մոտ 26 տոկ. կամ 79 միլ.
փուլթ) և Սիբիրը (15 միլն. փուլթ կամ 7 տոկ.)
Բայց այդ շըջանները չեն կարող ծածկել ցոր-
նի ընդհանուր հունձի պակասը, և արդյունքնե-
րը, ինչպես մենք արգեն ցուց ենք տվել, տա-
լիս են 117 միլն. փուլթ պակաս համեմատելով
1926 թվի հետ:

Հետո պետք է դիտել սթերումների ընթացքը. Ստորև բերված աղյուսակի մեջ մենք տալիս ենք պլանալին կազմակերպությունների հայթալիթումները 5 ամսվա ընթացքում՝ սկսած հուլիսից մինչև նոյեմբեր ինչպես 1926 թվի, նույնպես և 1927 թվի համար (տես աղյուսակը 56 յի բառում): Իբրև յելքի ամիս մենք ընդու-

նում ենք հույսը, վարովհոտե նոր բերքի հայ-
թալթումներն արդ ամսին են սկսվում։ Յեզ
ինչ ենք տեսնում մենք։ Բոլոր տեսակի հայա
հատիկներից մենք պակաս ենք։ Հայթալթել 75
մին. փութ կամ 22 տոկ., քան 1926 թվին։
Յորնի հայթալթման պակասը կազմում է 48
մին. փութ կամ 24 տոկ.։ Միանգամայն հա-
կառակ պատկերն են տալիս գյուղատնտեսական
մյուս մթերքները՝ յուղահատիկների հայթայ-
թումներն ընդհանուր առումով ավելանում են
(գրանական արտահայտությամբ) 81 տոկ. իսկ
արևածաղիկն առանձին, նույնիսկ 130 տոկոս
տեխնիքական կուլտուրաների հայթալթումները
տալիս են 47 տոկ. աճում են կենցղնական մր-
թերքները՝ 54 տոկ., զբա մեջ հաշվելով և միար
95 տոկ.¹), ձան 73 տոկ. և կովի յուղը՝ 48

Այսպիսով, զյուղացիությունը ծանրանում
եր կենդանական և անխնիկական օթերքների
վաճառքի վրա և, հնարավորության չափ, ձեռն-
պահ եր մնում հացի վաճառքից: Զե՞ վոր զյու-
ղացին վաճառում է միայն նրա համար, վոր-
պեսզի հարկերը վճարի և անհրաժեշտ արդյու-
նաբերական ապրանքներ գնի: Բայց յեթե մենք

¹⁾ Ճիշտ և մսի համար սկզբ և ովանք առաջ մասնաւոր հայթայթողների դերի զգալի անկումը:

չենք կարողանում նրան առաջարկել բավականաշափ արդյունսթերական ապրանքներ, նա, բնականաբար, չի շտապում վաճառել իր արնեհության արդյունքները: Ճիշտ ե գյուղացիական անտեսության մեջ կան այնպիսի ապրանքներ, փորոնց պահելը կամ ձեռնտու չե և կամ նույնիսկ անհնարին ե: Այս կարգին են պատկանում լուզը և ձուն (ինչպես գիտենք, նրանք փշանում են), միսը (անասուններին կերպել և պետք), և այնու Ահա հենց այս ապրանքներն են. վոր գյուղացին վաճառում ե առաջին հերթին:

Սակայն, հացամթերքների հայթայթումների դանդաղման զուղընթաց աճումնելին, ինչպես քաղաքաբնակ նույնպես և հյուսիսային շրջան, ների գյուղական բնակչության ալլուրի գնումները. բայց վորում զնումների այդ մեծացումը վոչ միայն անմիջական սպառման, այլև պաշարներ հավաքելու համար եր: Յեթե գյուղացին պահում եր հացը մասամբ պատերազմի և մասմբ ել անբերիության վտանգից, ապա սպառզն ել նույն նկատառումներից յելնելով ձբդում եր շատ գնել: Յեզ իրոք, հացի իրացումը (վաճառքը) պլանային հայթայթողների կողմից ներքին շուկայում մեծ շափերով աճեց անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ:

Ներկա մոմենտում մենք, գժրախտաբար, դեռ տվյալներ չունենք 5 ամիսների համար, բայց 4 ամսվա տվյալները (հուլիս-հոկտեմբեր) միանգամայն հաստատում են այդ՝ անցյալ տարի այդ ամիսներին մենք վաճառել ենք հացամթերքներ 118,7 միլն. ֆութ, իսկ այս տարի 138 միլն. 8 ֆութ (համարյա 20 միլն. ֆութ կամ 17 տոկ-ֆութ (համարյա 16 միլն. ֆութ կամ 17 տոկ-ֆութի). յեթե վերցնենք ցորենն առանձին կը տվելի). յեթե վերցնենք ցորենն առանձին կը տեսնենք. վոր նրա իրացումը ներքին շուկայում տեսնենք. վոր նրա իրացումը ներքին շուկայում 1926 թ. հուլիս-հոկտեմբերին կազմել ե 72,8 միլն. ֆութ. իսկ 1917 թ. նույն ամիսներին՝ 85,2 միլն ֆութ, այսինքն 12,4 միլն. ֆթով ավելի:

Բայց դուցե մենք ավելի շատ ենք ուղարկում արտասահման քան պետք ե: Այս հարցին կում արտասահման քան պետք ե: Այս հարցին պատասխանելու համար համագրենք վերջին տարիների արտածումը մինչպատերազմանի հետ Մենք հաց ենք ուղարկել արտասահման (հազար ֆթերով):

1913 թ., 1925-26 թ., 1926-27 թ., 1926 27 թվիր
համեմատած
1913 թ. հիտ

650,880 127.119 136,964 21⁰/₀
Հետևապես, մենք արտածում ենք մինչպատերազման արտածած հացի միայն սի հիւնցիուողը: Կոչանակե, մենք այստեղ ել պետք ե

ինդիր զնենք մեր առաջ՝ վոչ թե նվազեցնել,
այլ մեծացնել այն. Ինչ վերաբերում է այս տար-
վան, ապա մենք արտածել ենք ավելի պակաս,
քան անցյալ տարին. Ուղարկել ենք ընդունենք 5
ամիսների ընթացքում (հաղոր փթերով):

1927 թ. 1926 թ.

Հաճար	8,4	8,1
Յորեն	8,1	34,7
Գարի	1,9	21,5
Վարսակ	2,6	—

Ընդամեն 21,0 65,6

Այսպիսով, մենք արտասահման ենք ուղար-
կել ավելի քիչ, քան անցյալ տարի՝ բոլոր հա-
ցահատիկներից 44,6 միլ. ֆթ. իսկ ցորնից
26,6 միլ. ֆութ պակաս: Այս պայմաններում
խոսել թե մենք շատ ենք վաճառում արտասահ-
մանին նշանակում ե բոլորովին հաշիվ չառլ իրեն
իրերի իսկական կացության մասին:

Մենք տեսանք, վոր հացի մատակարարժան
ընդհատումների պիսավոր պատճառները գտնվում
են, մի կողմից նրա մեջ, վոր գյուղացիությու-
նը ձեռնպահ եր մնում հացի վաճառքից և մյուս
կողմից, նրանում, վոր սպառովը ձգտում եր
պաշարներ կուտակել: Բայց յեթե այս այդպես
է, ապա ինչ հետանկարներ կան հացի շուկայի
վերաբերյալ: Պահանջի գնումները, վորչափ նը-

րանք առաջանում են պատերազմի վատնգից,
ինքնին չեն կարող այլիս գեր խաղալ՝ շնորհիվ
մեր բացառիկ խաղաղասիրական քաղաքականու-
թյան հաջողվեց հետաձգել—և դա պարզվեց
թե բանվոր դասակարգին, և թե զյուղացիու-
թե բանվոր դասակարգին, և թե զյուղացիու-
թին: Ինչ վերաբերում է հայթայթումների հե-
տագա զարգացմանը, այլա կան բավարար հիմ-
քեր սպասելու, վոր մոտավոր ապագայում նը-
րանք դեպի լավացում կը գնան: Մենք արդեն
նշեցինք սին մտախն, վոր գյուղացին քիչ հաց
ծախում, վորովհետ նա չի կարողանում
ծախում զրամով բավականաշափ արգաւ-
նաբերական ապրանքներ գնել: Նշանակում է
վոր հացամթերումն ուժեղացնելու համար, պետք
է մեծացնել արգաւնաբերական ապրանքների
մատակարարումը գյուղին: Մեր կարգավորող որ-
գաններն աղյուս ել վարդեցին: Նրանք վճռե-
ցին քաղաքների հաշվին ուժեղացնել ապրանք-
ների մատակարարումը գյուղական վայրերին: Ի
հարկե, քաղաքային ազգաբնակությունը սահիպ-
ված պետք է լինի, գոա հետևանքով, վորոշ չա-
փով նեղվել մոտակա ամիսների ընթացքում, բայց
լուրաբանչյուր մի բանվոր կհասկանա, վոր լավ է
հետաձգել շապեկի համար չիթ գնելը, քան թե
հացի պակաս զգալ, Բացի այդ, հացամթերում-
ների լավացման մեր սպասումները հիմնված են

ան բանի վրա, վոր տեխնիկական կուլտուրա-ների մթերման սեզոնը վերջանալու վրա յէ, և գյուղացին, արդյունաբերական ապրանքներ գընելու համար պետք ե սկսի հաց վաճառել թեթե, որինակ, վերջանում և ձախդեղի մթերումը, վորը համեմատաբար նեղ շրջանի գյուղացիությանը տվել ե մոտ 100 միլ. ռուբլի, ապա նրա հետագա յեկամուտների աղբյուր կարող ե լինել միայն հացահատիկների վաճառքը, իսկ անհանգըստանալ թե կարող են սպառվել գյուղացիութան պաշարները—տեղիք չունի, քանի վոր արդ պաշարները, չը նայելով սակավաբերք տարուն, 1927 թվի հուլիսի 1-ին կազմում ելին ավելի քան 700 միլիոն ֆութ:

8 ԽՆԱՅՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՓԱՅՍՎԱՐՆԵՐԸ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Յեթե մենք խոսում ենք առաջարկի և պահանջի միջև հավասարակշռություն հաստատելու մասին, մենք պետք ե աչքի առաջ ունենանք ինայողությունները: Խնայողությունները յերկու տեսակի գեր են խաղում ժողովրդական անահառության մեջ՝ նրանք, առաջնը, լրացոցիչ միջոցներ են տալիս զարգացող արդյունաբերությանը և, յերկորդը՝ իջեցնում են ապրանքա-

յին պահանջի չափը կամ, համենայն դեպս, տարածում են նրան ժամանակի ընթացքի մեջ: Թե ինչ առտիճանի խոշոր ե խնայողությունների գերը կապիտալիստական յերկրներում, իսկ մենք ինը կատարի ունենք ամենից առաջ բանվորների, ծառակատի ունենք ամենից առաջ բանվորների խնայողությունը, — ուայողների և գյուղացիների խնայողությունը, — պարզգում և, որինակ, նրանից վոր յուրաքանչափառ 100 բնակչին ընկնում ելին խնայողական յուր 400 բնակչին ընկնում 45, Շվեյցարիայում՝ 52, Գրեուգներ՝ Դանիայում 45, Շվեյցարիայում՝ 52, Նորվեգիայում 42, Շվեդիայում՝ 38, Ֆրանսիայում՝ 35, Գերմանիայում՝ 33 (բոլոր տեղերի յուր 1910 թվին) և համար թվերը վերաբերում են 1910 թվին) և այն: Աշխատանքային ինայողությունների տարեկան չափերն անսպան գգալի յեն, վոր յեթե նրանք ամբողջովին ուղղվելին սպառման և արնային գործածության ապրանքներ գնելու համար, այդ դեպքում ուժգին կը կրծառվելին առանքային պաշարները և խիստ կը արձրանացին գները: Թե վորքան մեծ ե խնայողությունների կաշանակությունը յերկրի անտեսության մեջ, կարելի յե տեսնել Գերմանիայի որինակից: 1923 թ. աշնանը գերմանական թղթադրամների չափազանց մեծ ինֆլեյցիան կատարելապես անարժեք գարձրավ խնայողական զանձարկըդներում յեղած ավանդները, Բայց, ահա, առեղծվեց նոր, ամուր վալյուտան և արագու-

բԵն բարձրացավ հոսանքը գեղի խնայողական դրամարկղները, $4\frac{1}{2}$ տարվա ընթացքում (1923 թ. աշունից մինչև 1917 թվի հունիսը) այդ դրամարկղների ընհանուր գումարը բարձրացավ զերոյից մինչև 4 միլիարդ մարկ (2 միլիարդ ռ.), ըստ վորում, աճումը տեղի ունեցավ հետեւ կերպ՝ առաջին միլիարդը հավաքվեց 16 ամսում, յերկրորդը՝ 11 ամսում, յերրորդը՝ 9 ամսում, իսկ չորրորդը՝ 6 ամսում: Այս նշանակում ե, վոր Գերմանիայի աշխատավորությունը զրել է զերծանական բուրժուազիայի տրամադրության առկ իր 2 միլիարդ ռուբլին, իսկ ինքը հրաժարվել է համապատասխան գումարի ազգանք զնելուց: Յեթե այդ տեղի չունենար, այդ գեղքում զերծանական արդյունաբերությունը չերկարող այլպես շուտ գուրս կալ անտեսական այն փլուզամից, վորն իր կատարելիության բարձր աստիճանին եր հասել 1923 թվին, ֆրանսիական դորբերի Գերմանիայի առենազարդացած արդյունաբերական շրջանը մտնելուց հետո: Յեկ ինքնը սիրիական հասկանալի լի, վոր լիթե այդ աշխատանքային խնայողությունները ձախսվելին ապրանքների վրա, այդ գեղքում զերծանական բուրժուազիան այնպես ել հեշտությամբ չեր կարող վերջ տալ շուկայական գժվարություններին:

Իսկ ինչ դրության մեջ ե գործը մեզ մոտ: Վորչափ վոր բարեկեցության ընդհանուր մակերևույթը հեռու յէ մեր իգեալներից, մտածել այն մասին, թե մեր խնայողությունները շատ մեծ լինելին զեռ տեղին չե, մանավանդ, վոր սոցիալական պայմաններն արմատապես փոփոխվել են համեմատելով մինչպատերազմյան ժամանակի հետ: Առաջներում բանվորը և ծառայողը ամսից ամսի մի բան հետ եր գնում կամ հիվանդության, կամ ծերության և կամ թե յերեխաններին ուսում տալու համար: Այժմ այդ բոլորը հիմնովին ընկել ե, վորովհետեւ պրոլետարական պետությունը մացրել ե ապահովագրություն՝ հիվանդության, հաշմանդամության և գործազրկության դեպքերի համար և ձրի դպրոց ե տվել աշխատավորությանը: Այս պատճառով մենք ծախսում ենք բառացի կերպով այն բոլորն, ինչ վաստակում ենք, վոչինչ չենք հետ գցում ուն որվա համար»: Բայց այդորինակ վիճակը, յերբ յեկամտի յուրաքանչյուր մի կոպեկն անմիջապես գառնում ե ուեալ պահանջ շուկայում, պետք ե խորապես աննորմալ համարել, վորովհետեւ մեր միջավայրում տիրող անհոգությունը վաղվան որվա հանգեց — այդ պետք ե ասել — չի արդարացվում վոչ մեր կենցաղային հեղափոխությամբ, վոչ մեր սոցիալական ապահովագրության սիստեմով:

Ճիշտ ե, վերջացած տնտեսական տարին խնայողությունների մեծացման տեսակետից տվել ե վորոշ հետեանքներ: Յեթե հաշվառվեն խնայողական գրամարկղների մեջ մուծվող անհատական ավանդների աճումը և պետական փոխառությունների պարտատոմսերի լրացուցիչ գետեզումն ազգաբնակության մեջ, ապա անցյալ տարվա գումարները կեազմեն 150 միլիոն ռուբլի: Սակայն այդ դեռ սկիզբն ե: Յեթե մենք հիշենք, վոր խնայողական գրամարկղներում լեզած ավանդների գումարը (չհաշվելով փոխառությունները, վորոնք նույնպես մասամբ ընկնում ենին ազգաբնակության աշխատավորական շերտերի ձեռքը) կազմում եր մինչև պատերազմը համարյա 1.500 միլի. ռուբլի և այն, վոր ներկայումս 200 միլիոնի լել չի հասնում այն ժամանակ մենք կիսանանք, վոր նվաճած արդյունքները վոչ մի դեպքում չեն կարող բավարար համարվել: Մեր խնդիրն ե՝ «շարունակել խնայողությունների կամացանիան, ըստ ամենայնի ազգաբնակությանը մոտեցնել խնայոյղական գրամարկղները և առորյա յերեփույր դարձնել այն»: Միաժամանակ մենք չպետք ե շփարենք այն հանգանանքից, վոր կապիտալիզմի ժամանակ մենք մանր բուրժուական եյինք համարում խնայողությունները: Այն ժամանակ դա

ճիշտ եր: Խնայողական գանձարկղների միջոցով բանվորների և գյուղացիների գրամմերն ընկնում եյին կապիտալիսաների ձեռքը և այդ նըպաստում եր շահագործման լախացնանը միայն: Այժմ ամեն մի կոպեկ կարող ե գնալ պրոլետարիատն արդյունաբերության ամրացման համար միայն: Խնայողությունների համար տարվող նույն այդ կամացանիան մենք պետք ե տանենք նաև գյուղացիության մեջ: Անհրաժեշտ է բաց թողնել նոր փոխառություն հատկապես գյուղի համար. դա պետք ե լինի մատչելի և գրավիչ գյուղացիական մասսաների համար:

Խնայողությունների քաղաքականության մեջ մի մասնակի, բայց արտակարգ կարեսրություն ունեցող հարցերից մեկն ել հանդիսանում է կոռպերացիայի փայտրամեների գանձնման ուժեղացման խնդիրը: Այս մուծումներն անհամեստ քիչ են, քան մինչպատերազմյան ժամանակն եր: Այսպես, միջին փայտավճարը մի անդամի համար կազմում եր 20 ռուբլի, տատանվելով անկախ բանվորական կոռպերատիվներում 13 ո. 30 կոռպեկից մինչև 32 ո. 20 կոպ. գործարանային-փարոիկական (կախումն ունեցող) կոռպերատիվներում:

Հետպատերազմյան բանվորական կոռպերացիայում միջին փայն ունի հետեւալ պատկերը՝

1924թ. հոկտ. 1ին 2 ա. 44 կ.
 1925 » » 3 ա. 73 կ.
 1926 » » 4 ա. 72 կ.
 1927 » » 7 ա. 97 կ.*)

Մասնավորապես Մուկվալում, փայտվճարը
 գեռ մի լերկու ամիս առաջ կազմում եր մի-
 ջին հաշվով 5 ա. 30 կուգ.: Այսպիսով, ներկա
 փայտվճարը բանվորական կոռպերացիայում հա-
 մարդա 3 անգամ պակաս ե, քան նախապատե-
 րազմանը, իսկ լեթե ի նկատի ունենանք, փոք
 նախապատերազման սուբլին համարյա լերկու
 անգամ մեծ եր, այդ գեպքաւս կերեա, փոք յու-
 ղաքանչուր մի փայտաեր, կոլար թվով, մուծուս
 և կոռպերատիվին 5 անգամ քիչ քան 1914թվին:
 Գյուղական և փոխադրողների սպառողա-
 կան ընկերությունների փայտվաճանների մասին
 դատել կարելի լի հետևյալ աղյուսակով:

Թիշին փայտվեաը մի փայտաեր անդամի եամար

Ցերք	Գյուղ՝ սպառ.	ընկ.	փոխադրող սպառ. ընկ.
Հուն. 1914թ.—	17 ա. 80 կու		25 ա.-4
1 Դեկտ. 1924թ.—	1 » 79 »		4 » 04 »
» 1925թ.—	2 » 60 »		5 » 72 »
» 1926թ.—	3 » 11 »		7 » 42 »
» 1927թ.—	4 » 32 »		9 » 67 *)

*) Ստուգիչ թվերով, գումարը նախնական ե:
 *) Տվյալները՝ ստուգիչ թվերով:

Հետեապես այստեղ փայտվճարը հեռու լի
 մինչպատերազմանից: Գյուղական սպառկոռպ-
 ներում նա կազմում է մոտ մի քառորդը, փո-
 խադրողների սպառկոռպներում՝ մի քիչ բաձեր մեկ
 երրորդից: Իսկ ոռորդու գնողականությունը հաշ-
 վառելուց՝ զրանից ել պակաս ե:

Ճիշտ ե, սպառակոռպերացիայի անդամնե-
 րի թիվը այժմ տասն անգամ ավելի լի, քան
 1914թ.: Այստատճառով բնական ե, վոր վահ բո-
 լորը բանվորներն ու գյուղացիները կարող են վճա-
 րել մինչպատերազման փայտվճարները: Բայց
 մենք պարտավոր ենք խնդիր դարձնել մեզ հա-
 մար՝ հենցմոտ ապագայում փայտվճարները հասցը-
 նել՝ քաղաքում 15 ոռորդու, գյուղում՝ մինչեւ
 10 ա. երականապես, այդ միայն մի քիչ ըար-
 ձըր կլինի նախապատերազմանի մի լերրորդից:
 Ինքն ըստ ինքան հասկանալի լի, փոք այս մի-
 ջոցները չպետք ե շոշափեն ցածր փարձաւրփող
 բանվորների և ընչագուրկ գյուղացիության շա-
 հերը: Այդ նպատակի համար սպառողական ըն-
 կերությունները պետք ե ավելացնեն իրենց ո-
 գուտաներից չփափորության կոռպերացման հա-
 մար կատարվող հատկացումները, սահմանեն
 մուծումների ժամկետներ և այլն: Մուծումերի
 ափելացումն ու նոր անդամների ներդրավումը
 կարող են տալ, բոլոր կոռպերատիվ տեսակների

գծով, մոտ 75—80 միլ. ռ.: Դրանով մենք միանգամից յերեք նպատակների յինք հասնում մենք ամրացնում ենք կոոպերացիան, մեծացնում ենք ազգաբնակության խնայողությունները և միաժամանակ թուլացնում ենք շուկայի լարվածությունը:

9. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԵՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մոտակա ամիսներում սպասվում ե զգալի լավացուժ շուկայում ապրանքների մատակարարման աեսակետից: Առաջին կվարտալը, յերբ ամենալարված պահանջն և ներկայացնուժ գյուղացիությունը, յերբ նա ամբողջ տարվա իր գրամական յեկամտի 32—34 %-ն և ստանում, արդեն վերջացել ե: Յերկրորդ և յերրորդ կվարտալներում գյուղացու զբամական յեկամուտները նվազում են՝ նա, ինչպես մենք տեսնք, կրաքարտում կազմում ե տարեկան յեկամտի միայն մոտ 20 %-ը: Յեթե այդ կվարտայներին մենք գյուղ շաղրաենք լրացուցիչ ապրանքներ, իսկ այդ մենք անել կարող ենք վոչ միայն քաղաքներում ժամանակավորապես պակսած վաճառքի, այլ և թեթև արդյունաբերության արտադրանքը լրացուցիչ կերպով լայնացնելու հետևանքով, —այդ դեպքում հացամթերումները

դեպի լավը կզնան և մենք դուրս կը գանք պարենավորման շուկայի այն գժվարություններից, վոր մենք ապրում ելինք վերջին ամիսներում:

Բայց այդ, այսպես ասած, վաղվա գործն ե: Իսկ ինչպես կլինի հետազայում: Այդ արդեն մեր անտեսության հեռանկարային զարգացման խնդիրն ե, հնգամյա պլանի խնդիրն ե:

Մեր արդյունաբերության զարգացման ուղղությունը, իսկ նշանակալից չափերով և գյուղատնտեսությանը, խորհրդային պետության մեջ, վորոշվում ե պրոլետարիատի կազմակերպված կամցով: Մենք կարող ենք կառուցել ավելի նաև գործարաններ և ֆարբիկաներ արդյունաբերության մի ճյուղում և քիչ—մյուս ճյուղերում: Մենք կարող ենք խրախուսել գյուղատնտեսական մի կուլտուրա և վոչ մի ոժանդակություն ցույց չտալ մրուների ծավալմանը: Մեր անտեսության ապագայի ամբողջ ինսերն, այսպիսով, նույնանում ե այն միջոցների ավելի նապատականարմաք կերպով ոգտագործմանը, վորոնք կան մեր տրամադրության տակ: Հարց ե ժամանակում, մեր անտեսության վոր ճյուղի վրա պետք ե ավելի վճռականորեն սեղմել: Համ կե (բ) XV ըդ համագումարի բանաձեռք ժողովրդական անտեսության հնգամյա պլանի դիրեկտիվ-

ների մասին այդ հարցին տալիս ե միանդառայն վորոշակի պատասխան՝

«Յերկը ինդուստրացման քաղաքականության համապատասխան - ասված ե այդ բանաձեռի մեջ - առաջին հերթին պետք ուժեղացվի արտադրության միջոցների արտադրությունը այնպես, վորպեսզի ծանր և թեթև արդյունագործության, արանսպրտի և գյուղատնտեսության աճումը, այսինքն նրանց ներկայացրած արտադրական պահանջը հիմնականում ապահովված լինի ԽՍՀՄ արդյունագործության ներքին արտադրանքով։ Ավելի արագ զարգացման ահմազ պետք է հաղորդել ծանր արդյունագործության այն ճյուղերին, վորոնք ամենակարճ ժամանակամիջոցում բարձրացնում են ԽՍՀՄ անտեսական հզորությունը և ինքնապաշտպանության հնարավորությունները, վորոնք զարգացման հնարավորության յերաշխիք են հանդիսանում անտեսական շրջափակման, բլոկադայի դեպքում, թուացնում են կախումը կապիտալիստական աշխարհից և աշխակցում են գյուղատնտեսության վերակառուցմանը՝ ավելի բարձր աեխնիկայի և տնտեսության կուլեկտիվացման հիմքերի վրա։ Այս պատճառով առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ելեկտրիֆիկացիայի պլանի ամենաարագ իրացման, ոև և գունավոր մետաղա-

գործության զարգացման վրա, մասնավորապես, վորակավոր մետաղների մասում։ Քիմիական արտադրությունների զարգացման և, մասնավանդ, արհեստական պարարտանյութերի արտադրության վրա։ Քարածուխի, նավթի և տորֆի, ընդհանուր և գյուղատնտեսական մեքենակառուցման, նավաշինարարության, ելեքտրարդյունաբերության, վոսկու և պլատինի արդյունագործության հետագա լայնացման վրա»։

Յուրաքանչյուրի համար հասկանալի լի, վորառանց չուզունի (թուշ) պղնձի, ցեմենտի, ածուխի, մեքենաների համապատասխան արտադրության անհնարին ե զոչ միայն թեթև արդյունաբերության լայնացումը, այլև ընդհանուր անտեսությանն ամբողջովին։ Հենց այս պատճառով ե ընկ. Լենինը սոցիալիզմի հիմնական բազա անվանել ծանր արդյունաբերությունը։ Մանր արդյունաբերությունն աշխատում ե ամենից առաջ բավարարելու համար արդյունաբերության մյուս ճյուղերի, այսպես կոչված, արտադրական պահանջը, տալով նրանց արդյունաբերական հում նյութեր, վառելիք, շինարարական նյութեր և սարքավորում։ Նրա արտադրական նյութեր և սարքավորում։ Նրա արտադրանքի գլխավոր մասը մնում է արդյունաբերության և տրանսպորտի, այսպես ասած, նեղ շրջանակում - Ցեմենտի զավոդներն իրենց ապ-

րանքը տալիս են մեքենակառուցման զավոդներին, մեքենակառուցման զավոդները—անկվածալին Փաբրիկաներին և այդպես շարունակ։ Սակայն, արտադրության միջոցներ պատրաստող ճյուղերի արտադրանքի մի մասն անմիջապես լայն շուկա յէ մտնում։ Սրա մեջ են մըտնում տեսակագոր և ծածկի յերկաթը, գյուղատնտեսական մեքենաները և գործիքները, պատուհանի ապակին և զանազան յերկաթեղենները կապի համար, այսինքն մի շարք ապրանքներ, փորոնք խոշոր դեր են խաղում գյուղացիական պահանջի բավարարման տեսակետից։

Իիչ վերաբերում ե՛ թեթև արդյունաբերությանը, ապա, XV-րդ համազումարի հիշյալ բանաձեր հետևյալ ցուցունքներն ե տալիս հնգամյա պլանը կազմելու համար՝ «սպառման միջոցներ արտադրող արդյունաբերությունն իր արտադրանքի քանակին ու փորակը պետք ե հասցնի այն աստիճանին, գորպեսզի աշխատավորության համար մի շնչի սպառման նորման ապահով կերպով բավականաշափ բարձրանա։ Հատուկ ուշադրություն պետք ե դարձվի անկվածալին, կաշվեղենի և սննդի արդյունաբերությանը»։

Բայց ավելի հեշտ չե՞ր լինի սկսել հենց թեթև արդյունաբերության զարգացումից, լիովին հագեցնել ապրանքային սովոր և հետո մը-

տածել արտադրության միջոցներ պատրաստող ճյուղերի զարգացման մասին։ Ի հարկե, գա տվելի հեշտ կիներ—մանավանդ վոր, որինակ, տեքստիլ արդյունաբերության զարգացումն ավելի քիչ միջոցներ ե պահանջում, քան մետաղագործությունը։ Բայց այդ քաղաքականությունը կլիներ վերին աստիճանի անհեռատես։ Յեկ ահա թե ինչու։ Մենք, ասենք, մեկ-լերկու տարվա ընթացքում թեթև արդյունաբերությունը կը հարմարեցնելինք ազգայնակությունն պահանջին։ Սակայն ազգաբնակությունն աճում ե, և նրա պահանջները լայնանում են։ Հետեւապես շատ կարճ ժամանակից հետո, մենք կանգնած կլինելինք լայն շուկայի համար գործող արդյունաբերության ճյուղերի լայնացման անհրաժեշտության առաջ։ Յեկ հենց այստեղ ե, վոր մենք կանգնած կլինելինք անհրաժեշտ քանակությամբ շինարարական նյութերի, վառելիքի և մեքենաների բացակալության հանդեպ։ Յեթե այն ժամանակ մենք ձեռք զարկելինք ծանր արդյունագործությանը, վորը միայն կարող ե մեզ տալ այդ բոլորը, այդ դեպքում մենք ըստիպված կլինելինք վերադառնալ այն ինդիրներին, վերոնք այժմ առաջնակարգ են հանդիսանում մեզ համար, այսինքն արտադրական միջոցների արտադրությանը, — և թեթև արդյունագործությունը նորից պետք ե սպասել։

Ճիշտ ե, կարելի յե և այլ յելք դժոնել այս
դրությունից՝ արտասահմանից ներմուծել յեր-
կաթը, պղինձը, սարքափորումը, մի խոռքով այն
բոլորն, ինչ ամհրաժեշտ ե թեթև արդյունագոր-
ծության և որանոպորտի զարգացման համար:
Բայց դա այնտեղ կը հասցներ, վոր մենք յեր-
բեք չելինք կարող սեփական փոտքերի վրա
կանգնել մենք մշտապես կմնալինք տնտեսա-
կան կախման մեջ կապիտալիստական յերկրնե-
րից և վոչ միայն պատերազմը, այլ և ամեն մի
խոշոր բարգացում արտաքին աշխարհի հետ կը
խանգարեր մեր ամրողջ տնտեսական զարգաց-
մանը և մեզ կը դներ բացառիկ ծանր վիճա-
կում: Մենք չենք խոսում արդեն այն մասին
վոր յերկրի պաշտպանության համար մեծ նշա-
նակություն ունեցող ծանր արդյունագործու-
թյան զարգացման դանդաղումը հավասարագոր
կիներ մեր յերկրի զինաթափմանը կապիտա-
լիստական աշխարհի հանդեպ:
Բայց յեթե մենք շեշտը դնում ենք ծանր ար-
դյունագործության վրա, այդ գեռ բոլորովին չի
նշանակում, թե մեր ժողովրդական տնտեսու-
թյան հնգամյա պլանը բավականաշափ ուշա-
դրություն չի դարձնի սպառման առարկաներ
արտադրող արդյունաբերության վրա: Յեթե
մենք զիտենք ԳՖՏԽ կազմած արդյունագործու-

թյան հնգամյա պլանի նախնական ուրվագիծը,
կը տեսնենք, վոր յենթագրվում ե արդյունա-
բերության առանձին ճյուղերը զարգացնել այն-
պես, ինչպես ցույց ե տրված այս աղյուսակի
մեջ (տես յերես 78):

Ճիշտ ե, թեթև արդյունաբերության այդ
շափերի զարգացումն, անգամ, կարող ե անբա-
վարար լինել պահանջը լիովին հագեցնելու հա-
սար հինգ տարվա ընթացքում: Սակայն յեթե
մենք ցանկանում ենք մտածել ապագայի մա-
սին, յեթե մենք ցանկանում ենք սոցիալիզմ
կառուցել, մենք չպետք ե կանգ առնենք դըժ-
վարությունների առաջ, Ըսկ, Ռիկովս իր գե-
կուցման մեջ XV րդ համաշումարում այս առ-
թիվ ասաց հետեւյալ՝ «Ճանր արդյունագործու-
թյան զարգացման խորիը մենք կարող ենք
լուծել և կը լուծենք սեփական միջոցներով,
թեև դա մեզ հնարավորություն չը տա մոտա-
կա տարիների ընթացքում որակարգից միան-
գամայն հանել ալսպես կոչված գեֆիցիտալին
ապրանքների խնդիրը: Զե՞ վոր մինչեվ այժմ և
վոչ մի յերկիր չի կարողացել վերականգնել և
զարգացնել իր ծանր լնգուստրիան առանց ար-
տասահմանցան խոշը ոգնության: Յեթե մենք
ցանկանում ենք - իսկ մենք այդ պետք ե ա-
նենք, — զարգացնել ծանր արդյունագործու-

ԽՍՀՄ Գ.Ժ.ՏՆ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՐԳԱԿԱՆԱԳՈՒՅՆՆ
ԲՐԱՅԻ ԽԵԶԱԿՄԱՐ ՄՐՏԱՎՐԵԱՆՔԸ
(ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՄՈՒԹՅԱՆ)

Ա. Բ Ա Մ Պ Ա Խ Բ Ե ՄԻԱՅԻՆԵՐԸ	Ա Բ Ա Մ Պ Ա Խ Բ Ե Վ Ա Կ Ա Խ Ե Ր Ը	1925/27 թ. Վ Ա Կ Ա Խ Ե Ր Ը	1925/27 թ. 1931/32 թ.	1931/32 թ. Վ Ա Կ Ա Խ Ե Ր Ը	1926/27 թ. Վ Ա Կ Ա Խ Ե Ր Ը
Բամբակի հյուսվածք	Միլն. մ.	2.378.0	4.300.0	81.6	
Բ ը գ ե	»	82.2	127.7	55.3	
Վուշե	Մլ.քառ. մ.	187.5	280.0	49.3	
Կոչկեղեն	» գույզ	14.4	35.7	148.0	
Ֆարֆոր և փայտնո	—	48.3	73.0	69.0	
Կրկնակոչեկ	Մլ. գգ.	30.6	46.0	50.3	
Լուցկի	Հազ. արկդ	4.100.0	5.520.0	34.6	
Ռճառ տնտես.	Հազ. տոն	103.0	200.0	94.3	
Շաքարավագ	»	877.0	1.863.0	112.3	
Շաքար կար.	»	410.0	1.029.5	151.1	
Բուռական յուղեր (առանց բամբակի)	»	8.7	28.5	227.5	
Գլանակներ	Մլրդ հատ	39.7	69.0	73.8	
Մախորկա	Հազ. արկդ	2.493.0	4.060.0	62.9	
Չուկ	» տոն	249.0	671.9	170.0	
Պահածո զանտղ.	» տոն	26.3	123.0	367.7	
Կարի մերենաներ	» հատ	190.0	500.0	163.2	
Պութաններ	»	920.0	1.200.0	30.4	
Վարի մերենաներ	»	48.8	120.0	145.8	
Կալոսդ մեր.	»	52.0	96.0	84.6	
Ապակի զանտղն	» տոն	299.1	196.0	62.0	

թյունը սեփական միջոցներով, այդ դեպքում ստիպված պետք է լինենք առ ժամանակ սեղմակել վորոշ բաներում։ Այլ ցելք չկա մեր առաջի բանվորական և գյուղացիական մասսաների բարեկեցությունն անդադար բարձրացնելու մեր քաղաքականության ժամանակ շարունակ բարձրանալու յեւ լայն սպասման առարկաների պահանջը։ Վտանգը գտնվում է վոչ թե այս կամ այն գեղագիրում զգացվող լայն սպասման վորոշ ապրանքների պակասի մեջ՝ հանդեպ պահանջի, այլ ամբողջ ապրանքաշրջանառության հնարավոր ճգնաժամի մեջ, վորոն իր հետեւց կարող է գրամական սխառեմի ճգնաժամ բերել ամբողջ տնտեսության մեջ։ Վոչ մի գեղագրում մենք չենք կարող թուլլ տալ, վոր ճգնաժամն այդ աստիճան սրվի։ Մենք պետք են իմանանք ապրանքաշրջանառության մեջ հնարավոր թերությունների չափը և թուլլ չտանք, վոր նրանք հասցնեն նույնիսկ այնպիսի գժվարությունների, վորպիսիք մենք ապրել ենք վերջին կվարտավի ընթացքում։ Բայց ծանր արդյունագործության զարգացման բնագավառում, զանազան ժամանակավոր դժվարությունների ազդեցության տակ, մենք չենք կարող զիջել մեր դիրքերը։ Մանր արդյունագործության զարգացումը հնարավոր է միայն գաժան ուժիմի գեղագրում

սկզբում ապրանքաշրջանառության բնագավառում իսկ առանձին դեպքերում լայն գործածության ալս կամ այն ապրանքների վորոշ պակասի ժամանակ։ Անընդ աղջի նշանակում քերեվ արդյունագործությանը պետք է ընդհանրապես «հալածված գրության» մեջ մնիա ամեն կերպ պետք է առաջ մղել նրան, վորպես ով չը խանգարվի ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև, և վորպեսզի մենք չը հանդիպենք ընդհանուր տնտեսական ճգնաժամի։

գեկտեմբեր 1927 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0239216

59. 851

ԳԻՒԸ 25 ԿՈՊ.